



**«ՖԻՆՔԱ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Ֆինանսական հաշվետվություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«ՖԻՆԶ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Բովանդակություն

Էջ

ԴԵՎԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	1
ԱՆԿԱԽ ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	2
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ	6
ՇԱՅՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	8
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2016 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ	10
1. Ընկերությունը	10
2. Հաշվապահական հաշվառման կշանակալի բաղաբաղականություն	11
3. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները	22
4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը	24
5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	29
6. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ	29
7. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	30
8. Հաճախորդներին տրված վարկեր	30
9. Հիմնական միջոցներ	35
10. Ոչ կյուբական ակտիվներ	36
11. Այլ ակտիվներ	36
12. Պարտավորություններ հետգնման պայմանագրերով	36
13. Փոխառու միջոցներ	37
14. Այլ պարտավորություններ	38
15. Ստորադաս փոխառություններ	38
16. Բաժնետիրական կապիտալ	38
17. Չուտ տոկոսային եկամուտ	39
18. Չուտ օգուտ/(վնաս) արտարժույթային գործառնություններից	39
19. Անձնակազմի գծով ծախսեր	39
20. Այլ գործառնական ծախսեր	40
21. Շահութահարկ	40
22. Պայմանական պարտավորություններ	41
23. Գործարքներ կապակցված կողմերի հետ	43
24. Ֆինանսական գործիքների իրական արժեքը	45
25. Կապիտալի ռիսկի կառավարում	46
26. Ռիսկերի կառավարում	47
27. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	59

«ՖԻՆԸԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ղեկավարության հայտարարությունը 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ

Ղեկավարությունը պատասխանատու է «ՖԻՆԸԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությունն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՅՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՅՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն որոշակի գործարքների, իրադարձությունների և պայմանների ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության վրա ազդեցության վերաբերյալ:
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝

- Ընկերությունում արդյունավետ և ապահով ներքին վերահսկողության համակարգի մշակման, ներդրման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՅՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2017 թ. մայիսի 16-ին:

Ստորագրված է ընկերության ղեկավարության անունից՝

Հրայր Թոխմախյան
Գլխավոր տնօրեն



Արտակ Միքայելյան
Գլխավոր հաշվապահ

16 մայիսի, 2017 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՆԶ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Տնօրենների խորհրդին՝

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ՖԻՆԶ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ):

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Սույն ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի՝ *Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի* (ՀՎՄՍ-ի վարքագրի) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀՎՄՍ-ի վարքագրի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համատեքստում ընդհանրապես, և այդ հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս: Մենք չենք արտահայտում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

Ինչու է հարցը սահմանվել աուդիտի առումով առանցքային

Ինչպես է հարցը հաշվի առնվել աուդիտի ընթացքում

Հաճախորդներին տրված վարկերի արժեզրկում

Տես՝ ծան. 3 (Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ): Ընկերության կողմից հաճախորդներին տրված վարկերը, որոնք ներկայացված են ծան. 8-ում, 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 26,015,468 հազար դրամ:

Ընկերության վարկային պորտֆելը կազմված է փոքր վարկային գումարներից և մեծ թվով հաճախորդներից: Միևնույն բնույթի վարկային պորտֆելների համար արժեզրկման գծով պահուստները հաշվարկվում են հավաքական հիմունքով: Ակնկալվող դրամական հոսքերը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է հավաքագրման պատմական գործակիցների վրա հիմնված միզրացիոն մոդելները: Դեկավարությունը վեցամսյա հիմունքով գնահատում է մոդելները՝ հաշվի առնելով հավաքագրումների ներկա փորձը և հետագա ակնկալիքները: Մնացորդների էական լինելու և հաշվարկման սուբյեկտիվ բնույթի պատճառով սույն հարցը սահմանվել է որպես աուդիտի առանցքային հարց:

Իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Մենք ստուգել ենք վարկի հաստատման, վարչարարության և մոնիտորինգի նկատմամբ կիրառվող հիմնական վերահսկողությունների կառուցվածքը, իրականացումը և գործառնական արդյունավետությունը, ինչպես նաև վարկի արժեզրկման պահուստների բացահայտման և գրանցման գործընթացները:
- Մենք ներգրավել ենք մեր SS մասնագետներին՝ ստուգելու համակարգի սկզբնաղբյուրներից տվյալների հոսքը դեպի արժեզրկման մոդելներ և հավաստիանալու դրանց ամբողջականության և ճշգրտության մեջ:
- Մեր ներքին փորձագետների օգնությամբ մենք գնահատել ենք Ընկերության կողմից օգտագործվող՝ վարկային պորտֆելների արժեզրկումից կորուստների հաշվարկման մոդելները: Այդ նպատակով ստուգել ենք մոդելներում կիրառված ընտրանքային տվյալներ:
- Մենք գնահատել ենք, թե արդյոք մոդելավորման մեջ կիրառված ենթադրությունները հաշվի են առնում բոլոր առնչվող ռիսկերը, և թե արդյոք չմոդելավորված ռիսկերը ներկայացնելու նպատակով կիրառված հավելյալ ճշգրտումները հիմնավորված են: Եթե պահուստի գնահատման ժամանակ հնարավոր էր կիրառել առավել համապատասխան ենթադրություն կամ տվյալ, ապա պահուստը վերահաշվարկել ենք ըստ այդմ և համեմատել դրանք ղեկավարության հաշվարկների հետ, որպեսզի հավաստիանանք, որ ղեկավարության և մեր կատարած հաշվարկների միջև տարբերությունը էական չէ:

Համապատասխանությունը պայմանագրային դրույթներին

Ընկերությունը մի շարք միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ փոխառության պայմանագրեր է ստորագրել, որոնք Ընկերությանը որոշակի ֆինանսական և ոչ ֆինանսական դրույթներին համապատասխանություն են պարտադրում: Այդ պայմանագրերը պարունակում են դրույթներ՝ կապված այլ պայմանագրերում համապատասխան դրույթների պայմանների խախտումից բխող պարտավորությունների հետ: Եթե դրույթների համապատասխանության խախտում է տեղի ունեցել, ապա նախատեսված են մի շարք տույժ-տուգանքներ, ներառյալ գումարի վաղաժամկետ մարում: Սա կարող է հետագայում բացասաբար անդրադառնալ Ընկերության՝ անընդհատ գործելու կարողության վրա: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը խախտել էր պայմանագրային ֆինանսական դրույթներից մեկը: Դրա արդյունքում, մենք դիտարկել ենք Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման ժամանակաշրջանի համար ղեկավարության կողմից Ընկերության իրացվելիության դիրքի և հետագա դրամական միջոցների հոսքերի գնահատումը: Տես՝ ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություններ 13 և 26-ը:

- Վերլուծել ենք ֆինանսական դրույթի խախտման ուղղությամբ ղեկավարության ձեռնարկած գործողությունները և դրանց ընթացքը:
- Գնահատել ենք ղեկավարության կողմից կատարված իրացվելիության վերլուծությունը և վարընթաց գայնությունները, այդ թվում՝ բոլոր վարկառու կազմակերպությունների կողմից գումարի վաղաժամկետ մարում պահանջելու սցենարը:
- Մենք դիտարկել ենք փոխառության վերաբերյալ բոլոր պայմանագրերը և վերահաշվարկել պայմանագրային դրույթները:
- Մենք ստուգել ենք բոլոր փոխառությունների ճշգրիտ դասակարգումը սույն ֆինանսական հաշվետվություններում:

Կատարված աշխատանքի արդյունքում չենք հայտնաբերել Ընկերության անընդհատ գործելու կարողության հետ կապված որևէ էական հանգամանք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Շնկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Շնկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Շնկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Շնկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Շնկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական

գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների
խելամտությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման
անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով
ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք
առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն,
որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու
կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական
անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում
անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում
հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված
համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները
համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր
եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության
ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ,
ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել
Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը,
կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես
և ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու
դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք
աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև
աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին
հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք
հայտարարություն, ըստ որի մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ
վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր
հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ
ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ
կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում
ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ
ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և,
հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր:

Սյրուհի Գալոբյան

Գործադիր տնօրեն

Աուդիտի գործընկեր

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
16 մայիսի, 2017 թ.



«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Ակտիվներ	Ծան.	2016 թ.	2015 թ.
		դեկտեմբերի 31-ի դրությամբ	դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5	1,267,703	1,190,298
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	6	-	4,144
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
- Հետզնման պայմանագրերի դիմաց գրավադրված	7	1,268,240	948,971
Հաճախորդներին տրված վարկեր	8	26,015,468	28,240,546
Շահութահարկի գծով ընթացիկ ակտիվներ		2,781	38,024
Հետաձգված հարկային ակտիվներ	21	29,001	146,266
Հիմնական միջոցներ	9	360,820	457,305
Ոչ նյութական ակտիվներ	10	275,187	224,487
Այլ ակտիվներ	11	58,111	43,853
Ընդամենը ակտիվներ		29,277,311	31,293,894
Պարտավորություններ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	6	58,338	91,991
Պարտավորություններ հետզնման պայմանագրերի գծով	12	1,196,795	914,599
Փոխառու միջոցներ	13	21,028,839	22,706,026
Այլ պարտավորություններ	14	439,058	451,069
Ստորադաս փոխառություն	15	-	1,231,024
Ընդամենը պարտավորություններ		22,723,030	25,394,709
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	16	4,905,960	4,905,960
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերազնահատման պահուստ		42,624	(20,383)
Զբաղիված շահույթ	16	1,605,697	1,013,608
Ընդամենը սեփական կապիտալ		6,554,281	5,899,185
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		29,277,311	31,293,894

Ֆինանսական հաշվետվությունները 2017 թ. մայիսի 16-ին ստորագրվել են Ընկերության
ղեկավարության անունից՝


Հրաչյա Թոխմախյան
Գլխավոր տնօրեն




Արտակ Միքայելյան
Գլխավոր հաշվապահ

10-59 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:


«ՖԻՆԸԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Ծան.	2016 թ.	2015 թ.
Տոկոսային եկամուտ	17	8,845,784	8,090,993
Տոկոսային ծախս	17	(2,762,455)	(2,965,689)
Չուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստների գծով ծախսը		6,083,329	5,125,304
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ	8	(1,299,757)	(758,339)
Չուտ տոկոսային եկամուտ		4,783,572	4,366,965
Վարձավճարային և կոմիսիոն ծախսեր		(57,814)	(60,759)
Չուտ (վնաս)/օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		(10,461)	21,940
Չուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	18	112,565	85,638
Այլ եկամուտ		54,165	24,485
Չուտ ոչ տոկոսային եկամուտ		98,455	71,304
Գործառնական եկամուտ		4,882,027	4,438,269
Անձնակազմի գծով ծախսեր	19	(2,121,501)	(2,322,457)
Մաշվածություն և ամորտիզացիա	9, 10	(192,522)	(197,415)
Այլ գործառնական ծախսեր	20	(1,819,389)	(1,839,603)
Ընդամենը գործառնական ծախսեր		(4,133,412)	(4,359,475)
Շահույթ՝ մինչև շահութահարկը		748,615	78,794
Շահութահարկի գծով ծախս	21	(156,526)	(33,731)
Տարվա զուտ շահույթ		592,089	45,063
Այլ համապարփակ եկամուտ			
Հետագայում շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ շարժը՝ շահութահարկից հետո, 15,751 հազար ՀՀ դրամ (2015թ.՝ 5,096 հազար ՀՀ դրամ)		63,007	(20,383)
Տարվա այլ համապարփակ եկամուտ/(վնաս), շահութահարկից հետո		63,007	(20,383)
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ		655,096	24,680

Ֆինանսական հաշվետվությունները 2017 թ. մայիսի 16-ին ստորագրվել են Ընկերության ղեկավարության անունից՝

Հրաչյա Թոխմախյան
Գլխավոր տնօրեն



Արտակ Միքայելյան
Գլխավոր հաշվապահ

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
 (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

Մաս.	Բաժնետիրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	Զբաղիված Շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2015 թ. հունվարի 1-ի դրությամբ	4,905,960	-	968,545	5,874,505
Տարվա զուտ շահույթ	-	-	45,063	45,063
Տարվա այլ համապարփակ վնաս, շահութահարկից հետո	-	(20,383)	-	(20,383)
Մնացորդը 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,905,960	(20,383)	1,013,608	5,899,185
Տարվա զուտ շահույթ	-	-	592,089	592,089
Տարվա այլ համապարփակ եկամուտ, շահութահարկից հետո	-	63,007	-	63,007
Մնացորդը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,905,960	42,624	1,605,697	6,554,281

Ֆինանսական հաշվետվությունները 2017 թ. մայիսի 16-ին ստորագրվել են Ընկերության ղեկավարության անունից՝


Հրայր Թոխմախյան
 Գլխավոր տնօրեն




Արտակ Միքայելյան
 Գլխավոր հաշվապահ

10-59 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

	Ծան.	2016 թ.	2015 թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շահույթ՝ մինչև շահութահարկը ճշգրտումներ՝		748,615	78,794
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստ		1,299,757	758,339
Հիմնական միջոցների և ոչ կյուլթական ակտիվների օտարումից վնաս		3,690	2,604
Չուտ փոփոխություններ հաշվեգրված տոկոսագումարներում		(728,560)	52,159
Մաշվածություն և ամորտիզացիա		192,522	197,415
Արտարժույթային գործառնականություններից զուտ (օգուտ)/վնաս		(1,699)	31,219
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ներհոսք նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		1,514,325	1,120,530
Գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխություններ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների (նվազում)/աճ		(29,509)	193,912
Հաճախորդներին տրված վարկերի նվազում/(աճ)		1,548,418	(2,691,891)
Հետզնման պայմանագրերով պարտավորությունների աճ		277,657	914,395
Այլ ակտիվների (աճ)/նվազում		(12,650)	59,190
Այլ պարտավորությունների (նվազում)/աճ		(15,600)	80,988
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ներհոսք / (արտահոսք) մինչև շահութահարկի պարտավորությունների գծով վճարումները		3,282,641	(322,876)
Վճարված շահութահարկ		(19,768)	(79,081)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր / (գործառնական գործունեությունում օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր)		3,262,873	(401,957)
Լեդդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների ձեռքբերում		(238,672)	(958,388)
Հիմնական միջոցների ձեռքբերում		(63,987)	(82,851)
Ոչ կյուլթական ակտիվների ձեռքբերում		(86,440)	(100,089)
Լեդդրումային գործունեությունում օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր		(389,099)	(1,141,328)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Փոխառու միջոցներից մուտքեր		33,489,281	14,093,605
Փոխառու միջոցների մարումներ		(35,081,298)	(14,000,706)
Ստորադաս փոխառությունների մարումներ		(1,192,075)	-
(Ֆինանսական գործունեությունում օգտագործված դրամական միջոցների զուտ հոսքեր) / ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		(2,784,092)	92,899
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ / (նվազում)		89,682	(1,450,386)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	5	1,190,298	2,658,188
Փոխարժեքի տատանումների ազդեցությունն արտարժույթով պահվող դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(12,277)	(17,504)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	5	1,267,703	1,190,298

Ֆինանսական հաշվետվությունները 2017 թ. մայիսի 16-ին ստորագրվել են Ընկերության ղեկավարության անունից՝


Հրաչյա Թոխմախյան
 Գլխավոր տնօրեն




Արամ Ավակյան
 Գլխավոր հաշվապահ

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)**

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թվականի
դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

1. Ընկերությունը

«ՖԻՆԶԱ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, որի 100% բաժնետոմսերը պատկանում են FINCA Microfinance Coöperatief U.A-ին (Նիդեռլանդներ): Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից և այն գործունեություն է իրականացնում 2006 թ. մարտի 28-ին տրված N13 արտոնագրի համաձայն:

Ընկերությունը զբաղվում է միկրոֆինանսավորմամբ և տրամադրում է անհատական բիզնես, սպառողական և գյուղատնտեսական վարկեր: Վարկերը տրամադրվում են ինչպես տեղական արժույթով, այնպես էլ արտարժույթով:

Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ագաթանգեղոսի փող., 2ա:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ՀՀ-ում ունի 37 մասնաճյուղ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 36 մասնաճյուղ):

Ընկերության հիմնադիրը և վերջնական վերահսկողն է՝ FINCA International, Inc. միկրոֆինանսավորման հաստատությունների ցանցը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Վաշինգտոնում, և որն ունի մասնաճյուղեր/դուստր ընկերություններ աշխարհի 21 երկրներում: FINCA International Inc.-ը 2011թ.-ին FINCA Microfinance Coöperatief U.A-ին (սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն (կոոպերատիվ), որի պաշտոնական գրասենյակը գտնվում է Նիդեռլանդների Ամստերդամ քաղաքում), փոխանցել է Ընկերության 100% բաժնետոմսերը (թվով 136,472 բաժնետոմս) որպես ընկերակցության անդամակցության փայավճար:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերակցության անդամներն են՝

1. FINCA Microfinance Holding Organization LLC սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը գրանցված ԱՄՆ-ի Դելավեր նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Դելավեր 19808, Վիլմինգտոն, բն. 400, Սենթրբիլ խճուղի 2711: FINCA Microfinance Holding Organization LLC-ն ունի 99 քվե՝ որպես ընկերակցության Ա դասի անդամ և 1 քվե՝ որպես ընկերակցության Բ դասի անդամ:
2. FINCA International LLC՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ գրանցված ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգում, գրանցման հասցեն՝ ԱՄՆ, Մերիլենդ 21202, ՝ Բալթիմոր, 11 Իսթ Չեյս փողոց: FINCA International LLC -ն ունի 1 քվե՝ որպես ընկերակցության Բ դասի անդամ:

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA Microfinance Holding Company LLC -ի բաժնետերերն են հանդիսացել՝

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առաջին մակարդակի բաժնետերեր/թողարկված բաժնային կապիտալին տիրապետողներ		
FINCA International LLC	62.64%	62.64%
International Finance Corporation (Միջազգային ֆինանսական Կորպորացիա)	14.38%	14.38%
KfW	8.94%	8.94%
Nederlandse Financierings Maatschappij voor Ontwikkelingslanden N.V.	7.30%	7.30%
Credit Suisse Microfinance Fund Management Organization	2.98%	2.98%
ASN-NOVIB FONDS	1.68%	1.68%
Triodos Custody B.V.	1.04%	1.04%
Triodos SICAV II	1.04%	1.04%
Ընդամենը	100.00%	100.00%

«ՖԻՆԸԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

Finca International Inc.-ը շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ գրանցված Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրության համաձայն և որպես այդպիսին, նրա անդամները սեփականություն չունեն կազմակերպությունում, ինչպես նաև չունեն տնտեսական իրավունքներ: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA International Inc.-ի անդամները հետևյալներն են՝ Ռուպերտ Սքոֆիլդ, Ջոն Հեթչ, Ռոբերտ Հեթչ և Ռիչարդ Ուիլյամսոն: FINCA International Inc.-ը թողարկում է հրապարակայնորեն հասանելի ֆինանսական հաշվետվություններ:

«ՖԻՆԸԱ»-ի նպատակն է «Օգնել անապահովներին օգնելու իրենք իրենց»: «ՖԻՆԸԱ»-ն հավատում է, որ համաշխարհային սովը և աղքատությունը չեն կարող հաղթահարվել պարզապես սնունդ բաժանելով և դրամաշնորհներով, բայց կարող են մեկընդմիջտ կրճատվել անապահով մարդկանց ինքնաաջակցման և ինքնապահովման միջոցով:

«ՖԻՆԸԱ»-ն տրամադրում է ինքնաաջակցման հնարավորություն՝ կարիքավոր համայնքներում ստեղծելով համայնքային վերականգնվող/չրջանառվող ֆոնդեր կամ «գյուղական բանկեր» իր դուստր կազմակերպությունների միջոցով:

Դուստր կազմակերպությունները, սովորաբար, առանձին իրավաբանական անձինք են, որոնք «ՖԻՆԸԱ»-ի հետ կնքել են համապատասխան համաձայնագրեր: Փոքր վարկերը հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել անհատական կամ համայնքային շահութաբեր միկրո ձեռնարկություններում: Մասնակիցները բարելավում են իրենց վստահությունը սեփական հնարավորությունների նկատմամբ, արժանապատվության զգացումը և ստեղծում խնայողությունների ֆոնդ, որը պատկանում է համայնքին՝ որպես շարունակական ներդրումների մշտական աղբյուր:

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի բաղաբանություն

Համապատասխանության մասին հայտարարություն. Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով (այսուհետ՝ հազար դրամ), եթե այլ բան նշված չէ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես ներկայացված է ստորև հաշվապահական հաշվառման բաղաբանությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ակտիվների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցները այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ վարձակալության գործարքներից, որոնք նկարագրված են ՀՀՍՍ 17-ում, և չափումներից, որոնք թեև համանման են իրական արժեքին, սակայն իրական արժեքով չեն, մասնավորապես օգտագործման արժեքը՝ ըստ ՀՀՍՍ 36-ի:

Ի լրումն, ֆինանսական հաշվետվությունների նպատակով իրական արժեքի չափումները դասակարգվում են մակարդակ 1, 2 և 3-ի՝ ելնելով իրական արժեքի չափումներում օգտագործված սկզբնական տվյալների դիտարկելիության աստիճանից, ինչպես նաև այդ սկզբնական տվյալների՝ իրական արժեքով չափման ամբողջական պատկերի վրա ազդեցության էականության աստիճանից: Այդ մակարդակները կարելի է նկարագրել հետևյալ կերպ՝

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հագար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

- Մակարդակ 1-ի դեպքում ելակետային տվյալներ են հանդիսանում ակտիվ շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների նշված գները (չճշգրտված), որոնք Ընկերությանը հասանելի են չափման ամսաթվի դրությամբ:
- Մակարդակ 2-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են ակտիվների կամ պարտավորությունների գծով:
- Մակարդակ 3-ի ելակետային տվյալները իրենցից ներկայացնում են ակտիվների կամ պարտավորությունների գծով ոչ դիտարկելի ելակետային տվյալները:

Ընկերությունն ընդհանուր առմամբ ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են ծանոթագրություն 26-ում:

Գործառնական արժույթ. Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը («Գործառնական արժույթ»): Ընկերության գործառնական արժույթը ՀՀ դրամն է (այսուհետ՝ դրամ): Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Ընկերության հաշվապահական քաղաքականության մեջ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

Հասույթի ճանաչում

Տոկոսային եկամուտների և ծախսերի ճանաչումը. Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույթն այն դրույթն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները գեղջում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այդուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույթը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը գեղջելիս:

Իրական արժեքով չափվող ակտիվների գծով ստացված տոկոսները դասակարգվում են որպես տոկոսային եկամուտ:

Ծառայության վճարների և միջնորդավճարների ճանաչումը. Վարկի տրամադրման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույթի ճշգրտում: Երբ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի պայմաններով վարկային համաձայնության, վարկային

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հագար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)**

պարտավորության ստանձնման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և հետագայում ճանաչվում որպես տրամադրված վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ քիչ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի վարկային համաձայնագրի, վարկ տրամադրելու պարտավորության ստանձնման վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում վարկի տրամադրման պարտավորության մնացորդային ժամանակահատվածի ընթացքում: Այն դեպքում, երբ վարկ տրամադրելու պարտավորությունն ավարտվում է առանց վարկի տրամադրման, ապա վարկ տրամադրելու պարտավորության վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում պարտավորության ավարտի պահին: Վարկի սպասարկման վճարները եկամտագրվում են, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են: Բոլոր այլ միջնորդավճարները ճանաչվում են այն ժամանակ, երբ ծառայությունները մատուցվում են:

Ֆինանսական գործիքներ. Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) տրամադրված վարկեր և դեբիտորական պարտքեր, դ) վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այնպես կառաջանար, կամ
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հագար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են եկամուտներում կամ ծախսերում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտիվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են համապատասխանաբար «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի, վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

բ) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գծով ընկերությունն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե ընկերությունը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակարկվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, ընկերությանը կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

գ) Վարկեր և դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում (ներառյալ բանկերից ստացվելիք միջոցներ, հաճախորդներին տրված վարկեր և այլ ֆինանսական ակտիվներ) դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

դ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ (գ) վարկեր և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. Ֆինանսական ակտիվները, բացի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների հայտնաբերման նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված՝ ցուցակված կամ չցուցակված կապիտալի ներդրումներում արժեթղթի իրական արժեքի զգալի կամ տևական անկումը իր ինքնարժեքից համարվում է արժեզրկման օբյեկտիվ վկայություն: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները՝

- թողարկողի կամ գործընկերոջ զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը, կամ
- տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)**

- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի նախաձեռնումը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են վարկերը և դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք ըստ գնահատականների առանձին արժեզրկված չեն, ի լրումն գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից: Վարկային պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող է համարվել Ընկերության նախկին փորձը վճարումների հավաքագրման գծով, հետաձգված վճարումների թվի աճը պորտֆելում ինչպես նաև ազգային կամ տեղական մակարդակում դիտարկելի փոփոխությունները, որոնք կարող են հանգեցնել դեբիտորական պարտքի անհավաքագրելիության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախսի գումարը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ զեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված տոկոսարդույթով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով ծախսի գումարը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ զեղչված շուկայում համանման ֆինանսական ակտիվի եկամտաբերության դրույթաչափով: Նման արժեզրկումից կորուստը ենթակա չէ հակադարձման հաջորդ ժամանակաշրջաններում:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են եկամուտներում կամ ծախսերում:

Երբ վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, այլ համապարփակ եկամուտում ճանաչված կուտակված օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես տվյալ ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար, այն դեպքում, եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորուստի գումարը նվազում է, և նվազեցումը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցող դեպքերի, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ամորտիզացված արժեքն այն դեպքում, եթե այդ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Վերանայված վարկեր. Վարկի պայմանագրային պայմանները կարող են փոփոխվել մի շարք պատճառներով, ներառյալ՝ շուկայի փոփոխվող պայմանները, հաճախորդների պահպանումը և այլ գործոններ, որոնք չեն առնչվում հաճախորդի ներկա կամ հնարավոր վարկային դրության վատթարացման հետ: Երբ վարկի՝ պայմանագրով նախատեսված վճարման պայմանները փոփոխվում են այն պատճառով, որ դեկավարությունը էական մտավախություններ ունի վարկառուի կողմից վարկային պարտավորությունների կատարման ունակության վերաբերյալ, ապա այս վարկերը դասակարգվում են որպես վերանայված վարկեր: Մանրածախ վարկավորման դեպքում, երբ դիտարկվում է, թե արդյոք առկա են էական մտավախություններ վարկառուի կողմից իր պայմանագրով նախատեսված վճարումների կատարման ունակության վերաբերյալ, դեկավարությունը գնահատում է հաճախորդի կողմից վճարման ուշացումների կարգավիճակը, հաշվի շարժը, մարումների պատմությունը, ընթացիկ ֆինանսական վիճակը և վճարունակության շարունակականությունը: Եթե հաճախորդը չի կատարում պայմանագրով նախատեսված վճարումները կամ ակնհայտ է, որ դրա իրականացումն անհնար է առանց վերանայման, կառաջանա էական մտավախություն նրանց կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման վերաբերյալ, և վարկը կբացահայտվի որպես արժեզրկված, եթե տրամադրված զիջումը էական չէ և առկա չէ արժեզրկման որևէ այլ հայտանիշ:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (3ագար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

Երբ վարկի պայմանագրային պայմանների փոփոխությունն իրենից ներկայացնում է զիջում տևտեսական կամ իրավական պատճառներով, որոնք առնչվում են վարկառուի ֆինանսական դժվարություններին և իրենից ներկայացնում է զիջում, որը ղեկավարությունը այլապես չէր դիտարկի, ապա վերանայված վարկը համարվում է արժեզրկված:

Վերանայված վարկը ներկայացվում է որպես արժեզրկված և արժեզրկումից կորուստները չափվում են այն ժամանակ, երբ`

- տեղի են ունեցել պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերի փոփոխություններ այնպիսի զիջման արդյունքում, որը վարկատուն այլապես չէր դիտարկի,
- հավանական է, որ առանց զիջման, վարկառուն չէր կարողանա լիարժեքորեն կատարել իր պայմանագրային պարտավորությունները:

Վերանայված վարկը կշարունակի բացահայտվել որպես արժեզրկված, քանի դեռ առկա չէ բավարար վկայություն առ այն, որ տեղի է ունեցել ապագա դրամական հոսքերի չվճարման ռիսկի էական նվազում, և առկա չեն արժեզրկման այլ հայտանիշներ: Այն վարկերի գծով, որոնք գնահատվում են արժեզրկման տեսանկյունից խմբային հիմունքներով, այդ վկայությունը որպես կանոն իրենից ներկայացնում է վճարման պատմության համեմատումը սկզբնական կամ վերանայված պայմանների հետ, ըստ անհրաժեշտության: Այն վարկերի գծով, որոնք գնահատվում են արժեզրկման տեսանկյունից առանձին հիմունքներով, բոլոր առկա վկայությունները գնահատվում են յուրաքանչյուր դեպքի համար առանձին:

Վերանայված վարկերը դասակարգվում են որպես չարժեզրկված, եթե վերանայումը արդյունք է վարկառուի կողմից պայմանագրային պայմանների կատարման վերաբերյալ էական մտավախությունների, սակայն վերանայման պայմանները հիմնված են ներկա շուկայական դրույթաչափերի վրա և նման վերանայման արդյունքում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի հավաքագրումն ակնկալվում է ամբողջությամբ: Չարժեզրկված վերանայված վարկերը նաև ներառում են նախկինում արժեզրկված վերանայված վարկերը, որոնց գծով ժամանակի ընթացքում դիտվել է բավարար կատարողական, կամ որոնք գնահատվել են` հիմք ընդունելով բոլոր առկա վկայություններն այն մասին, որ առկա չեն արժեզրկման մնացած այլ հայտանիշներ: Վերանայված վարկերը տարանջատվում են վարկային պորտֆելի այլ մասերից` արժեզրկման խմբային հայտանիշների գնահատման համար` արտացոլելու համար այս սեգմենտներում հնարավոր կորուստների ավելի բարձր ցուցանիշները: Վերանայված վարկերը տարանջատված են վարկային պորտֆելի այլ մասերից` կոլեկտիվ արժեզրկման գնահատման տեսանկյունից` այդ սեգմենտներում վնասի ավելի բարձր ցուցանիշը արտացոլելու նպատակով:

Որոշելիս, թե արդյոք վերակառուցված վարկը պետք է ապաճանաչվի և ճանաչվի նոր վարկ, ղեկավարությունը դիտարկում է, թե որքանով են պայմանագրի սկզբնական պայմանների փոփոխությունները հանգեցնում վարկի վերանայման, որն ընդհանուր առմամբ, կհամարվեր էականորեն տարբեր ֆինանսական գործիք: Գործոնները, որոնք ցույց են տալիս, որ վերանայված վարկը էականորեն տարբեր գործիք է, մասնավորապես ներառում են, երաշխիքների կամ վարկի պայմանների փոփոխությունը, գրավի առարկայի գծով պակաս էական փոփոխությունները, մարման դրույթների կամ կանխավճարի դրույթների ավելացումը:

Վարկերը, որոնք սահմանվել են որպես վերանայված, պահպանում են այս կարգավիճակը մինչև դրանց մարումը կամ ապաճանաչումը:

Վարկերի և կանխավճարների դուրսգրում. Վարկերի և կանխավճարների արժեզրկումից կորուստները վերագրվում են պահուստներին, երբ համարվում են անհավաքագրելի: Վարկերը և կանխավճարները դուրս են գրվում ընկերության ղեկավարության կողմից գումարների հավաքագրման ուղղությամբ իրականացված բոլոր հնարավորություններն օգտագործելուց և գրավները վաճառելուց հետո: Դուրս գրված գումարների հետագա հավաքագրումը համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում է որպես ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներին կատարած մասհանումների վերադարձ հավաքագրման ժամանակաշրջանում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)**

կապված, ըստ եռլայան, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ եռլայան, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Եթե Ընկերության շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ և թողարկված բաժնային գործիքներ

Որպես պարտք կամ սեփական կապիտալ դասակարգումը. Պարտքային և բաժնային գործիքները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ կամ սեփական կապիտալ՝ ելնելով պայմանագրային պարտավորությունների եռլայանից և ֆինանսական պարտավորության կամ բաժնային գործիքի սահմանումից:

Բաժնային գործիքներ. Բաժնային գործիքը ցանկացած այն պայմանագիրն է, որը վկայում է կազմակերպության ակտիվում ունեցած բաժնեմասնակցության մասը՝ հանած բոլոր պարտավորությունները: Բաժնային գործիքները ճանաչվում են որպես մուտքեր՝ հանած թողարկման ուղղակի ծախսերը:

Ընկերության սեփական բաժնային գործիքների հետգնումը ճանաչվում և ուղղակիորեն նվազեցվում սեփական կապիտալից: Ընկերության սեփական բաժնային գործիքների գնման, վաճառքի, թողարկման կամ դադարեցման արդյունքում առաջացած օգուտները կամ վնասները չեն ճանաչվում շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Այլ ֆինանսական պարտավորություններ. Այլ ֆինանսական պարտավորությունները, ներառյալ փոխառու միջոցները, ստորադաս պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածում տոկոսային ծախսի բաշխման մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույթն այն տոկոսադրույթն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույթի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա գույն հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ. Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, այդ թվում՝ արտարժույթի սվոփեր և արտարժույթի փոխանակման պայմանագրեր:

Սվոփի իրենից ներկայացնում է կողմերի միջև որոշակի ժամանակահատվածում վճարումների հոսքերի փոխանակման պայմանագրային համաձայնություն՝ դրանց հիմքում ընկած որոշակի ցուցանիշի նկատմամբ, օրինակ տոկոսադրույթի, արտարժույթի փոխարժեքի կամ կապիտալի ինդեքսի նկատմամբ: Արժույթային սվոփի ընթացքում Ընկերությունը վճարում է որոշակի գումար մեկ արժույթով և ստանում գումար մեկ այլ արժույթով: Արժույթային սվոփերը մեծ մասամբ համախառն են վճարվում:

Նման ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող և դրանց հաշվառումն իրականացվում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Իրական

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

արժեքը որոշվում է հիմնվելով այնպիսի գնանշման մոդելների վրա, որոնք հաշվի են առնում վերոնշյալ գործիքների և այլ գործոնների ընթացիկ շուկան և պայմանագրային արժեքները: Ածանցյալ ֆինանսական գործիքները համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է և պարտավորություններ, եթե դրանց արժեքը բացասական է: Վերոնշյալ գործիքներով իրականացված գործարքներից շահույթը և վնասը գրանցվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվություններում՝ որպես իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների (պարտավորությունների) գործարքներից առաջացած զուտ օգուտ կամ վնաս: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են օգուտում կամ վնասում:

Ընկերությունը որպես վարձակալ: Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցներն և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, վարկային կազմակերպություններից ստացվելիք գումարները, որոնց մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը, որոնք կարճ ժամկետում կարող են փոխարկվել կանխիկի և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Բռնագանձված ակտիվներ: Որոշակի հանգամանքներում, ակտիվները բռնագանձվում են ժամկետանց վարկերի գծով գրավադրված գույքի վրա արգելանքի կիրառման դեպքում: Բռնագանձված ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և վաճառքի ինքնարժեքից նվազագույնով:

Հիմնական միջոցներ: Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է գրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

Կապի և հաղորդակցության միջոցներ	— 3 տարի
Գրասենյակային գույք	— 5 տարի
Փոխադրամիջոցներ	— 5 տարի
Այլ հիմնական միջոցներ	— 5 տարի

Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումները մաշեցվում են վարձակալության ժամկետից և օգտակար ծառայության ժամկետից նվազագույնով, եթե առկա չէ ողջամիտ համոզվածություն այն մասին, որ Ընկերությունը կստանա ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի վերջում կամ կերկարաձգի վարձակալության ժամկետը:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ: Ոչ նյութական ակտիվները հիմնականում կազմված են ծրագրային ապահովումից և լիցենզիաներից: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները, որոնք առանձին են ձեռք բերվել, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով Որը գնահատվում է 5-10 տարի: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

Ծանոթության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում. Ոչ նյութական ակտիվները ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արոյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեզրկում, բացի գուղվից. Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Ընկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի գնահատվեն արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Ընկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծանոթությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար առնվազն տարեկան մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել: Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է. օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով մինչև հարկումը տոկոսադրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է ֆինանսական արոյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արոյունքում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորուստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Հարկում. Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկ. Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույթաչափերը:

Հետաձգված հարկ. Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (*Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ*)

բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով՝ կապված հիմնական միջոցների և հաճախորդներին տրված վարկերի հետ: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, կապված վերը նշված ներդրումների հետ, ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը և ժամանակավոր տարբերությունը կմարի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ ետևյալի ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր. Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Գործունեության հետ կապված հարկեր. Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Ընկերության գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Պահուստներ. Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ ետևյալի որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ. Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սակայն բացահայտվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հավանականությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հագար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

վիճակի մասին հաշվետվությունում, բայց դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Արտարժույթ. Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության գործառնական արժույթից տարբեր արժույթով (արտարժույթով) կատարված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները (տարրերը) վերահաշվարկվում են այդ օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, վերահաշվարկվում են իրական արժեքի սահմանման օրվա փոխարժեքով: Արտարժույթով հաշվարկված սկզբնական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում:

Դրամական միավորների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են եկամուտներում կամ ծախսերում՝ դրանց առաջացման ժամանակաշրջանում:

Սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման տեսանկյունից, Ընկերության գործունեության ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ օգտագործելով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքները: Եկամուտների և ծախսերի հոդվածները փոխարկվում են տվյալ ժամանակահատվածի միջինացված փոխարժեքով, բացառությամբ այն դեպքի երբ տվյալ ժամանակահատվածում առկա է փոխարժեքի էական տատանում: Այս դեպքում օգտագործվում են գործարքի ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքները: Առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ եկամուտի մեջ և կուտակվում սեփական կապիտալում:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջում հետևյալն են՝

	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեք	
	2016 թ.	2015 թ.	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	480.45	477.82	483.94	483.75

Գրավ. Ընկերությունը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց ընդունում է գրավ, երբ դա նպատակահարմար է համարվում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և Ընկերությանը վերապահվում է պահանջի իրավունք այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա և ապագա պարտավորությունների դիմաց:

Բաժնետիրական կապիտալ. Բաժնետիրական կապիտալի համալրումները ճանաչվում են սկզբնական արժեքով: Թողարկված նոր բաժնեմասերին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումներից, նվազեցվում են սեփական կապիտալից՝ հանած շահութահարկը:

3. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Ընկերության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Ընկերության ղեկավարության անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն և դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Գնահատման անորոշությունների հիմնական աղբյուրները. Ստորև ներկայացվում են ապագային վերաբերող առանցքային ենթադրությունները և ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատումներից բխող անորոշության այլ հիմնական աղբյուրները, որոնք կրում են ակտիվների և

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

պարտավորությունների հաշվեկշռային արժեքների՝ հաջորդող ֆինանսական տարում էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Վարկերի և դեբիտորական պարտքի արժեզրկում. Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ դրանք արժեզրկման տեսանկյունից գնահատելու համար: Ընկերության վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Ընկերությունը վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի և ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Ընկերության կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Ընկերությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն՝ հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս: Անհատական գնահատումները կիրառվում են այն վարկերի և դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված նշանակալի են: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը ընդհանուր վարկային պորտֆելի մնացորդի 0.5%-ից ավելին է կազմում, համարվում են առանձին վերցված նշանակալի: Այն դեպքում, երբ վարկառուն ունի ֆինանսական դժվարություններ, և առկա են սակավաթիվ պատմական տվյալներ՝ կապված համանման վարկառուների հետ, Ընկերությունը արժեզրկումից կորուստների գումարները գնահատելու համար հիմնվում է ղեկավարության դատողության վրա:

Առանձին վերցված նշանակալի վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերն և դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերն և դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների և կետանցվածության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Ընկերությունը ապագա դրամական հոսքերում փոփոխությունները գնահատում է՝ ելնելով նախկին ցուցանիշներից, հաճախորդների նախկին վարքագծից, տվյալ խմբի վարկառուների կողմից վճարումների կատարման իրավիճակի վատթարացման դիտարկելի տվյալներից, ինչպես նաև տնտեսական պայմաններից, որոնք առնչություն ունեն խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատականներ՝ ելնելով վստասների նախորդ փորձից այն ակտիվների գծով, որոնք ունեն վարկային ռիսկին բնորոշ հատկանիշներ և առկա է վարկերի խմբին համանման արժեզրկման հայտանիշ: Ընկերությունը հիմնվում է ղեկավարության դատողության վրա՝ վարկերի խմբի գծով դիտարկելի տվյալները ճշգրտելու համար այնպես, որ դրանք արտացոլեն պատմական տվյալներում չարտացոլված ընթացիկ հանգամանքները: Խմբային հիմունքով գնահատման մեթոդաբանության խնդիրն է՝ ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահուստավորումը որոշվում է՝ ելնելով ներկա տնտեսական և քաղաքական հանգամանքներից: Ընկերությունը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Յայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերը կազմում էին համապատասխանաբար՝ 26,607,459 և 28,701,290 հազար դրամ, իսկ պահուստը՝ համապատասխանաբար 591,991 և 460,744 հազար դրամ: 2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերը ներառում են վերանայված վարկերը համապատասխանաբար 1,375,183 և 763,757 հազար դրամ գումարով և արժեզրկումից պահուստը՝ համապատասխանաբար 196,603 և 67,084 հազար դրամ գումարով:

Յիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ. Յիմնական միջոցները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Ընկերությունը վերանայում է հիմնական միջոցների գնահատված օգտակար

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

Ծառայության ժամկետները յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում: Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը ղեկավարության դատողության խնդիր է՝ հիմնված նմանատիպ ակտիվների գծով ունեցած նախկին փորձի վրա: Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում ակնկալվող օգտագործումը, գնահատված տեխնիկական կամ բարոյական մաշվածությունը, ֆիզիկական մաշվածքը և ֆիզիկական միջավայրը, որում գործարկվում է ակտիվը: Նշված հանգամանքներում կամ գնահատումներում որևէ փոփոխություն կարող է բերել ապագա մաշվածության դրույթաչափերի փոփոխության:

Գործառնության արժույթ. Ընկերությունը յուրաքանչյուր տարի գնահատում է գործառնության արժույթը, քանի որ հիմնական տնտեսական միջավայրը, ուր Ընկերությունը գործունեություն է ծավալում, հայաստանյան շուկան է, որտեղ գործառնության արժույթը ՀՀ դրամն է:

Ֆինանսավորման ավելացման շարունակական կարողություններ. Քանի որ Ընկերության անհրաժեշտ է ֆինանսավորել իր աշխատանքները՝ որպես միկրոֆինանսավորող կազմակերպություն և փոխառությունները հիմնականում 1-ից 3 տարի ժամկետով են, Ընկերությունը գնահատում է ֆինանսական միջոցների ներգրավման շարունակականությունը ամեն տարի:

Բնականոն բիզնես գործընթացներից ելնելով՝ Ընկերությունը վարկատուների հետ մշտապես բանակցությունների և հաղորդակցման գործընթացում է գտնվում՝ թե՛ ընթացիկ վարկերի պայմանների վերանայման, թե՛ նոր վարկային պայմանագրերի ստացման նպատակներով:

4. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառումը

Փոփոխություններ ՀՀՄՍ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա: Ընթացիկ տարում ընդունվել/վերանայվել են հետևյալ ստանդարտները և դրանց մեկնաբանությունները: Այս փոփոխությունների կիրառումը Էական ազդեցություն չի ունեցել սույն Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

- ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թթ. զիկ
- ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թթ. զիկ

ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թթ. զիկ. ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումների 2010-2012 թթ. զիկը ներառում է մի շարք ՀՀՄՍ-ների փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

ՀՀՄՍ 2-ի փոփոխությամբ տեղի է ունենում փոփոխություն «իրավունքի առաջացման պայմաններ» և «շուկայական պայմաններ» հասկացության սահմանման մեջ, ավելացնելով «կատարողական պայմաններ» և «ծառայության պայմաններ» հասկացությունների սահմանումները, որոնք նախկինում ներառված էին «իրավունքի առաջացման պայմանների» սահմանման մեջ:

ՀՀՄՍ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պայմանական վճարումը, որը դասակարգվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, անկախ նրանից, թե արդյոք պայմանական վճարն իրենից ներկայացնում է ֆինանսական գործիք՝ համաձայն ՀՀՄՍ 39-ի կամ ՀՀՄՍ 9-ի, կամ ոչ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն:

ՀՀՄՍ 8-ում տեղի ունեցած փոփոխություններով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը բացահայտի ղեկավարության դատողությունները՝ կիրառելով ամբողջականացման չափանիշը գործառնական սեզմենտների նկատմամբ և պարզաբանվում է, որ հաշվետու սեզմենտի ընդհանուր ակտիվների համեմատաբար Ընկերության ակտիվների հետ պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ սեզմենտի ակտիվները կանոնավորապես տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնող մարմին:

ՀՀՄՍ 13-ի եզրակացության հիմքերի վերաբերյալ փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 13-ի թողարկումը և դրան հետևած փոփոխությունները ՀՀՄՍ 39-ում և ՀՀՄՍ 9-ում չեն հանգեցնում կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքի՝ առանց տոկոսադրույքի նշման, հաշիվ-ապրանքագրային արժեքով և առանց զեղչման չափման հնարավորության կասեցման, եթե զեղչման ազդեցությունը նշանակալի չէ: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում անմիջապես:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի փոփոխությունները վերացնում են առկա անհամապատասխանությունները կուտակված մաշվածության/ամորտիզացիայի հաշվառման գծով այն դեպքում, երբ հիմնական միջոցի միավորը կամ ոչ նյութական ակտիվը վերագնահատվում են: Ըստ վերանայված ստանդարտների պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը համապատասխան եղանակով և որ կուտակված մաշվածությունը/ամորտիզացիան իրենից ներկայացնում է համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության գծով վնասների հաշվարկով դիտարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

ՀՀՄՍ 24-ում տեղի ունեցած փոփոխությունները պարզաբանում են, որ առանցքային ղեկավար անձնակազմի ծառայություններ տրամադրող կառավարչական կազմակերպությունը հանդիսանում է հաշվետու ընկերության հետ փոխկապակցված կողմ: Համապատասխանաբար, հաշվետու ընկերությունը պետք է բացահայտի կառավարչական կազմակերպությանը առանցքային ղեկավար անձնակազմի ծառայությունների տրամադրման դիմաց վճարված կամ վճարման ենթակա բոլոր հաշվեգրված գումարները որպես կապակցված կողմերի հետ գործարքներ: Այնուամենայնիվ, նման փոխհատուցման բացահայտում չի պահանջվում:

ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ` 2011-2013 ցիկլ. 2011-2013 ցիկլի ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ստանդարտը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ ձեռնարկումների ձևավորման հաշվառման նկատմամբ տվյալ համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվություններում:

ՖՀՄՍ 13-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խմբի գուտ հիմունքով իրական արժեքի որոշման համար պորտֆելի բացառման շրջանակը ներառում է բոլոր պայմանագրերը, որոնք կարգավորվում են և հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի, անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պայմանագրերը համապատասխանում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը` համաձայն ՀՀՄՍ 32-ի:

ՀՀՄՍ 40-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 40-ը և ՖՀՄՍ 3-ը փոխադարձաբար բացառելի չեն, և կարող է պահանջվել այդ երկու ստանդարտների միաժամանակ կիրառումը: Համապատասխանաբար, ներդրումային գույք ձեռք բերող ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք տվյալ գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը` համաձայն ՀՀՄՍ 40-ի, և արդյոք գործարքը համապատասխանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սահմանմանը` համաձայն ՖՀՄՍ 3-ի:

Ընկերությունը չի իրականացրել թողարկված, սակայն դեռևս չգործող որևէ այլ ստանդարտի, փոփոխության կամ մեկնաբանության վաղ կիրառում:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ

Ընկերությունը չի իրականացրել հրապարակված, սակայն դեռևս չգործող հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-ների վաղ կիրառում:

- ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ²
- ՖՀՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ (և առնչվող պարզաբանումները)²
- ՖՀՄՍ 16. Վարձակալություն³
- Փոփոխություններ ՀՀՄՍ 2-ում. Բաժնեմասի վրա հիմնված վճարումների գործարքների դասակարգում և գնահատում²
- Փոփոխություններ ՀՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28-ում. Ներդրողի և նրա հետ ասոցացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում⁴
- Փոփոխություններ ՀՀՄՍ 7 ստանդարտում. Բացահայտման նախաձեռնություն¹
- Փոփոխություններ ՀՀՄՍ 12 ստանդարտում. Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը չիրացված կարուստների համար¹
- Փոփոխություններ ՀՀՄՍ 4 ստանդարտում. ՖՀՄՍ 9 ստանդարտի կիրառումը ՀՀՄՍ 4 (Ապահովագրության պայմանագրեր)²

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (*Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ*)

- ՖՅՄԿ 22. Արտարժույթով գործարքներ և կանխավճարներ²
- Փոփոխություններ ՀՀՄՍ 40 ստանդարտում. Ներդրումային գույքի փոխանցում ²
- ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ` 2014-2016 թթ

¹Գործում է 2017 թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

²Գործում է 2018 թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

³Գործում է 2019 թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:

⁴Գործում է որոշման ենթակա ժամկետների տարեկան ժամանակահատվածների համար: Թույլատրվում է ավելի վաղ կիրառումը:

ՖՀՄՍ 9. Ֆինանսական գործիքներ

2009 թ. նոյեմբերին հրապարակված ՖՀՄՍ 9 նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՀՄՍ 9 փոփոխվել է 2010 թ. հոկտեմբերին` ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապահովագրման պահանջներ, ինչպես նաև` 2013 թ. նոյեմբերին` սահմանելով հեջավորման ընդհանուր հաշվառման նոր պահանջներ: 2014 թ. հուլիսին թողարկվեց ՖՀՄՍ 9-ի լրամշակված տարբերակը, որում հիմնականում ներկայացված են ա) ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահանջները, բ) ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման գծով սահմանափակ թվով փոփոխություններ` ներկայացնելով «այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող իրական արժեք» հասկացությունը որոշակի պարզ պարտքային գործիքների գծով:

ՖՀՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են`

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը.** Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները, որոնք գտնվում են ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի շրջանակներում, պետք է հետազայում դասակարգվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումար և դրա չվճարված մասի նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով: Բիզնես մոդելում պահվող պարտքային գործիքները, որոնց նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման և թե ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով, և որոնք ունեն ֆինանսական ակտիվին բնորոշ պայմանագրային պայմաններ, ըստ որոնց առաջանում են դրամական հոսքերի որոշակի ժամկետներ, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա վրա կուտակված տոկոսի մարում` որպես կանոն չափվում են իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՖՀՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են անփոփոխ որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում առևտրային նպատակներով) ներդրման իրական արժեքով` այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:
- **Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը.** Ինչ վերաբերում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններին, ըստ ՖՀՄՍ 9-ի պահանջվում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է տվյալ պարտավորությանը բնորոշ վարկային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, եթե պարտավորության վարկային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում չի ստեղծում կամ մեծացնում շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանությունը: Ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին վերագրվող իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն դասակարգվում շահույթում կամ վնասում: Ըստ ՀՀՄՍ 39-ի, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխության ամբողջ գումարը ներկայացվում է շահույթում կամ վնասում:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հագար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

- **Արժեզրկում.** Ինչ վերաբերում է ֆինանսական ակտիվների արժեզրկմանը, ՖՅՍՍ 9-ով պահանջվում է «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսական ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՖՅՍՍ 39-ով նախատեսված հաշվեգրված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար վարկային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալը այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու տեսանկյունից:
- **Իջեցված հաշվառում.** Ներկայացնում է իջեցված հաշվառման նոր մոդել, որում պահանջվում են ներկայումս ՖՅՍՍ 39-ով սահմանված իջեցված հաշվառման մեխանիզմի 3 տեսակները : Ըստ ՖՅՍՍ 9-ի ավելի ճկուն մոտեցում է սկսել կիրառվել իջեցված հաշվառման ենթակա գործարքների տեսակների մասով, մասնավորապես, ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես իջեցված հաշվառման գործիքներ, և ոչ ֆինանսական միավորների ռիսկի տարրերի տեսակները, որոնք ենթակա են իջեցված հաշվառման: Ավելին, արդյունավետության ստուգումը փոխարինվել է «տնտեսական հարաբերությունների» սկզբունքով: Բացի այդ, այլևս չի պահանջվում իջեցված արդյունավետության հետընթաց գնահատում: Ներդրվել են նաև Ընկերության ռիսկերի կառավարման գործունեության գծով բացահայտման լրացուցիչ պահանջներ:

Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2018 թ. հունվարի 1-ից և թույլ է տրվում դրա վաղ կիրառումը: Կախված ՖՅՍՍ 9-ի կիրառման ընտրված մոտեցումից, անցումային շրջանում տարբեր պահանջների գծով առաջին անգամ կիրառում կարող է տեղի ունենալ մեկ կամ մեկից ավելի ամսաթվերով:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՅՍՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՖՅՍՍ 9-ի ազդեցության վերաբերյալ որոշամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

ՖՅՍՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ

2014 թ. ապրիլին հապարակվեց ՖՅՍՍ 15-ը, որը միասնական համընդհանուր մոդել է սահմանում կազմակերպությունների կողմից հաճախորդների հետ պայմանագրերից զոյացած հասույթի հաշվառման համար: ՖՅՍՍ 15-ը ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի ներկայումս գործող հասույթի ճանաչման ուղեցույցը, այդ թվում՝ ՖՅՍՍ 18 Հասույթ, ՖՅՍՍ 11 Կառուցման պայմանագրեր և դրանց հարակից մեկնաբանությունները:

ՖՅՍՍ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ Ընկերությունը պետք է ճանաչի հասույթը՝ խոստացված ապրանքների կամ ծառայությունների՝ հաճախորդին փոխանցման փաստը ներկայացնելով այն գումարով, որն Ընկերությունը ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների դիմաց: Մասնավորապես, ստանդարտը ներկայացնում է որոշակի հիմունքներով մշակված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառելի է հաճախորդների հետ ունեցած բոլոր պայմանագրերի գծով:

Մոդելի հինգ քայլերը հետևյալն են՝

- հաճախորդի հետ ունեցած պայմանագրի սահմանում
- պայմանագրի կատարման պարտավորությունների սահմանում
- գործարքի գնի որոշում
- գործարքի գնի բաշխում պայմանագրի կատարման պարտավորությունների նկատմամբ
- հասույթի ճանաչում այն ժամանակ (կամ այն բանից հետո), երբ ընկերությունը բավարարում է պայմանագրի կատարման պարտավորությունը:

Ըստ ՖՅՍՍ 15-ի, ընկերությունը ճանաչում է հասույթը այն ժամանակ, կամ այն բանից հետո, երբ պայմանագրի կատարման պարտավորությունը բավարարված է, այսինքն՝ երբ տվյալ կատարման պարտավորությանն առնչվող ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Ավելի նկարագրական ուղեցույց է ավելացվել նաև այնպիսի թեմաների մասով,

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

ինչպիսիք են՝ հասույթի ճանաչման պահը, փոփոխական հատուցման հաշվառումը, պայմանագրի կատարման և ձեռքբերման հետ կապված ծախսերը և մի շարք այլ հարակից հարցեր:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում. Բացահայտման նախաձեռնության ծրագիր. Այս փոփոխություններով պարզաբանվում են տեղեկատվության բացահայտման սկզբունքները: Ընդլայնվում է էականության սահմանումը: Այն սահմանում է տվյալների ընդհանրացման և տարանջատման պահանջները, պարզաբանում է, որ էականությունը կիրառելի է ֆինանսական հաշվետվությունների բոլոր բաժինների վրա, և անգամ այն դեպքերում, եթե ստանդարտներով պահանջվում է առանձնահատուկ բացահայտումների գծով էականության չափանիշների կիրառում: Ստանդարտը նաև ավելի ընդլայնված ուղեցույցներ է պարունակում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների հերթականության վերաբերյալ:

Փոփոխությունը գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրա ավելի վաղ կիրառումը: Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Փոփոխություններ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտներում. Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում. ՀՀՄՍ 16-ում կատարված փոփոխությունները արգելում են կազմակերպություններին հիմնական միջոցի միավորների նկատմամբ կիրառել հասույթի հիման վրա մաշվածության մեթոդը: ՀՀՄՍ 38 ստանդարտի փոփոխությունները ներկայացնում են վիճարկելի ենթադրություն և առ այն, որ հասույթը չի հանդիսանում ակտիվի ամորտիզացիայի համար պատշաճ հիմք: Այս ենթադրությունը կարող է վիճարկվել միայն այն դեպքում, ա) երբ ոչ նյութական ակտիվն արտահայտված է որպես հասույթի չափման միավոր, կամ բ) երբ հնարավոր է ցույց տալ, որ ոչ նյութական ակտիվի գծով հասույթը և դրա գծով տնտեսական օգուտների սպառումը սերտորեն փոխկապակցված են:

Այս փոփոխությունները կիրառվում են առաջընթաց կերպով 2016թ. սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակահատվածների համար: Ներկայումս Ընկերությունը իր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի համար կիրառում է գծային մեթոդը: Ընկերության ղեկավարության կարծիքով գծային մեթոդը առավել պատշաճ է ներկայացնում համապատասխան ակտիվներում պարունակվող տնտեսական օգուտների սպառումը և հետևաբար, չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թթ. ցիկլ. 2012-2014 թթ. ցիկլի ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՀՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՀՀՄՍ 5-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ակտիվի վերադասակարգումը կամ օտարումը՝ վաճառքի համար պահվող ակտիվից սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի կամ հակառակը, չպետք է համարվի վաճառքի պլանի կամ սեփականատերերին բաշխման պլանի փոփոխություն և պետք է կիրառվեն օտարման Նոր մեթոդի հանդեպ կիրառելի դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Ավելին, այս փոփոխություններով պարզաբանվում է, որ ակտիվները, որոնք այլևս չեն համապատասխանում սեփականատերերին բաշխման համար և վաճառքի համար պահվող ակտիվի չափանիշներին, պետք է դիտարկվեն նույն կերպ, ինչ ակտիվները, որոնք դադարում են դասակարգվել որպես վաճառքի համար պահվող: Այս փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

ՀՀՄՍ 7-ի փոփոխությունները լրացուցիչ պարզաբանում են, թե արդյոք սպասարկման պայմանագիրն իրենից ներկայացնում է փոխանցված ակտիվում շարունակական մասնակցություն՝ փոխանցված ակտիվների գծով պահանջվող բացահայտումների տեսանկյունից: Ի լրումն, ՀՀՄՍ 7-ի փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանելու, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման բացահայտման պահանջները, թեև հստակորեն պարտադիր չէ ներկայացնել բոլոր միջանկյալ ժամանակահատվածների կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, սակայն կարող է պահանջվել այս բացահայտումների ներառումը կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ՀՀՄՍ 34-ի հետ համապատասխանություն ապահովելու տեսանկյունից: Այս փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց կերպով:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

ՀՀՍՍ 19-ի փոփոխությունները պարզաբանում են, որ բարձր որակի կորպորատիվ պարտատոմսերը, որոնք օգտագործվում են կենսաթոշակային հատուցումների գեղչատոկոսի գնահատման համար, պետք է թողարկվեն հատուցումների վճարման արժույթով: Փոփոխությունները կիրառվում են տվյալ փոփոխությունների առաջին անգամ կիրառմամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում սկսած ամենավաղ համեմատական ժամանակաշրջանից:

ՀՀՍՍ 34-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՍՍ 34-ով պահանջվող տեղեկատվությունը, որը ներկայացված է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում, սակայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից դուրս, պետք է խաչաձև հղման միջոցով ներկայացվի միջանկյալ հաշվետվության և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների այլ մասերի միջև, որը պետք է հասանելի լինի օգտագործողներին միևնույն պայմաններով և միևնույն ժամանակ, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամ	427,311	562,965
Հաշիվներ բանկերում	100,009	627,333
Տեղաբաշխված միջոցներ բանկերում՝ մինչև երեք ամիս մարման ժամկետով	740,383	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,267,703	1,190,298

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, թղթակցային հաշիվները պահվում են առևտրային ռեզիդենտ բանկերում, ընդ որում մնացորդի 71.54%-ը պահվում է երկու ռեզիդենտ առևտրային բանկում: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Ընկերությունը ունի մեկ ֆինանսական հաստատությունում կենտրոնացած միջոցներ, որոնց մնացորդը գերազանցում է սեփական կապիտալի 10%-ը 742,638 հազար դրամի չափով (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերությունը չուներ մեկ ֆինանսական հաստատությունում կենտրոնացած միջոցներ, որոնց մնացորդը կգերազանցեր սեփական կապիտալի 10%-ը):

6. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Ընկերությունն իրականացրել է տարբեր արժութային սվոփեր: Նման ածանցյալ ֆինանսական գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով: Ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ այն դեպքում, երբ նրանց իրական արժեքը դրական է, և որպես պարտավորություն այն դեպքում, երբ այն բացասական է:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները/պարտավորությունները ներառում են.

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Ակտիվներ	Իրական արժեք		Անվանական գումար		Միջին կշռված պայմանագրային փոխարժեք	
	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016 թ.	2015 թ.	2016 թ.	2015 թ.
<i>ՀՀ դրամի առք ԱՄՆ դոլարի վաճառք</i>						
- մինչև 1 ամիս	-	1,338	-	483,125	-	483.13
- 1-ից 2 ամիս	-	2,806	-	480,460	-	480.46
	-	4,144	-	963,585	-	
Պարտավորություններ						
<i>ՀՀ դրամի առք ԱՄՆ դոլարի վաճառք</i>						
- 1-ից 2 տարի	(13,691)	(14,880)	960,760	960,760	480.38	480.38
- 2-ից 3 տարի	(44,647)	(77,111)	574,692	957,820	478.91	478.91
	(58,338)	(91,991)	1,535,452	1,918,580		

Նշված ֆինանսական գործիքներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ: Վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում է հաշվեկշռում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքը:

7. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ներառում են ՀՀ ֆինանսների նախարարության պարտատոմսեր, որոնք գրավադրված են այլ բանկերի հետ կնքված հետգնման պայմանագրերի դիմաց 1,268,240 հազար դրամ ընդհանուր գումարով (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 948,971 հազար դրամ): ՀՀ ֆինանսների նախարարության պարտատոմսերն ունեն 6.2% (2 պարտատոմս) և 6.9% (1 պարտատոմս) անվանական տոկոսադրույք և մինչև 2020 թ. ժամկետայնություն:

8. Հաճախորդներին տրված վարկեր

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր	26,607,459	28,701,290
Նվազեցված արժեզրկման կորուստների պահուստը	(591,991)	(460,744)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	26,015,468	28,240,546

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերը ըստ վարկատեսակների՝

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անհատական բիզնես վարկեր	12,235,002	14,379,186
Սպառողական վարկեր	212,451	-
Անհատական գյուղատնտեսական վարկեր	13,755,785	10,121,052
Խմբային գյուղատնտեսական վարկեր*	184,783	2,342,242
Խմբային բիզնես վարկեր*	219,438	1,858,810
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	26,607,459	28,701,290
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(591,991)	(460,744)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	26,015,468	28,240,546

* Խմբային և գյուղատնտեսական վարկերը ներառում են խմբային գյուղատնտեսական և բիզնես վարկային խմբերի վարկեր, որոնց հիմնական բնութագիրը կայանում է նրանում, որ այս վարկերը տրամադրվում են միայն անհատների խմբերին, որոնք համաձայնում են իրավական պարտավորություն ստանձնել այլ գործընկերների անվճարունակության դեպքում, եթե նման

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

անհրաժեշտություն առաջանա: 2016 թ. հունվարի 1-ից սկսած Ընկերությունը նման բնութագրերով վարկեր չի տրամադրում:

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկեր ըստ տնտեսության ոլորտների.

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վերլուծություն ըստ ճյուղայնության՝		
Գյուղատնտեսություն	14,095,231	12,666,080
Առևտուր	5,811,488	7,826,224
Արդյունաբերություն	1,527,933	2,164,642
Տրանսպորտ	1,161,260	1,440,284
Շինարարություն	681,099	828,753
Այլ	3,330,448	3,775,307
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	26,607,459	28,701,290
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(591,991)	(460,744)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	26,015,468	28,240,546

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հագար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

Ստորև ներկայացված է արժեզրկման գծով պահուստի շարժը.

	<u>Գյուղատնտեսություն</u>	<u>Առևտուր</u>	<u>Արդյունաբերություն</u>	<u>Տրանսպորտ</u>	<u>Շինարարություն</u>	<u>Այլ</u>	<u>Ընդամենը</u>
2015 թ. հունվարի 1	96,983	91,168	21,449	12,406	6,462	34,424	262,892
Հավելյալ ճանաչված պահուստներ	268,270	247,565	77,622	30,757	24,749	109,376	758,339
Ակտիվների դուրս գրում	(239,558)	(298,734)	(96,609)	(30,510)	(22,308)	(116,251)	(803,970)
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնում	56,101	94,557	38,974	7,769	4,927	41,155	243,483
2015 թ. դեկտեմբերի 31	181,796	134,556	41,436	20,422	13,830	68,704	460,744
Հավելյալ ճանաչված պահուստներ	662,755	277,607	78,185	85,654	38,360	157,196	1,299,757
Ակտիվների դուրս գրում	(629,185)	(360,104)	(117,024)	(78,417)	(44,508)	(210,763)	(1,440,001)
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնում	68,434	93,936	37,227	9,794	8,969	53,131	271,491
2016 թ. դեկտեմբերի 31	283,800	145,995	39,824	37,453	16,651	68,268	591,991

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեքն՝ ըստ Ընկերության կողմից ստացված ապահովվածության տեսակի 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	<u>Գյուղատնտեսություն</u>	<u>Առևտուր</u>	<u>Արդյունաբերություն</u>	<u>Տրանսպորտ</u>	<u>Շինարարություն</u>	<u>Այլ</u>	<u>Ընդամենը</u>
Վարկեր ապահովված անշարժ գույքով	570,290	1,905,889	444,566	93,045	-	238,536	3,252,326
Վարկեր ապահովված շարժական գույքով	248,629	1,152,119	229,823	164,786	4,983	237,030	2,037,370
Վարկեր ապահովված անհատների երաշխավորությամբ	13,276,312	2,753,480	853,544	903,429	676,116	2,854,882	21,317,763
	14,095,231	5,811,488	1,527,933	1,161,260	681,099	3,330,448	26,607,459
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(283,800)	(145,995)	(39,824)	(37,453)	(16,651)	(68,268)	(591,991)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,811,431	5,665,493	1,488,109	1,123,807	664,448	3,262,180	26,015,468

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեքն՝ ըստ Ընկերության կողմից ստացված ապահովվածության տեսակի 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	Գյուղատնտեսություն	Առևտուր	Արդյունաբերություն	Տրանսպորտ	Շինարարություն	Այլ	Ընդամենը
Վարկեր ապահովված անշարժ գույքով	256,548	1,819,346	463,849	89,247	-	232,780	2,861,770
Վարկեր ապահովված շարժական գույքով	252,917	2,569,113	586,242	212,969	4,376	436,170	4,061,787
Վարկեր ապահովված անհատների երաշխավորությամբ	12,156,615	3,437,765	1,114,551	1,138,068	824,377	3,106,357	21,777,733
	12,666,080	7,826,224	2,164,642	1,440,284	828,753	3,775,307	28,701,290
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(181,796)	(134,556)	(41,436)	(20,422)	(13,830)	(68,704)	(460,744)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,484,284	7,691,668	2,123,206	1,419,862	814,923	3,706,603	28,240,546

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված բոլոր վարկերը (ընդհանուր պորտֆելի 100%) տրվել են Հայաստանի Հանրապետությունում գործող անհատներին և կազմակերպություններին, որը ցույց է տալիս, որ առկա է նշանակալի աշխարհագրական համակենտրոնացում մեկ շրջանում:

Ստորև ներկայացված է 2016 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի որակի վերաբերյալ վերլուծությունը՝

	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
Խմբային գնահատված	25,827,599	246,596	25,581,003	0.95%
Ոչ ժամկետանց ժամկետանց՝				
- 1-ից 30 օր ժամկետանց	218,839	36,910	181,929	16.87%
- 31-ից 60 օր ժամկետանց	165,095	58,107	106,988	35.20%
- 61-ից 90 օր ժամկետանց	116,007	57,498	58,509	49.56%
- 91-ից 180 օր ժամկետանց	279,919	192,880	87,039	68.91%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	26,607,459	591,991	26,015,468	2.22%

Ստորև ներկայացված է 2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի որակի վերաբերյալ վերլուծությունը՝

	Համախառն վարկեր	Արժեզրկման գծով պահուստ	Չուտ վարկեր	Համախառն վարկերի արժեզրկման պահուստ
Խմբային գնահատված	27,887,311	139,447	27,747,864	0.50%
Ոչ ժամկետանց ժամկետանց՝				
- 1-ից 30 օր ժամկետանց	255,053	38,381	216,672	15.05%
- 31-ից 60 օր ժամկետանց	160,358	50,928	109,430	31.76%
- 61-ից 90 օր ժամկետանց	129,235	57,917	71,318	44.82%
- 91-ից 180 օր ժամկետանց	269,333	174,071	95,262	64.63%
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	28,701,290	460,744	28,240,546	1.61%

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել անհատապես նշանակալի համարվող փոխառուներ:

Պայմանագրային պայմանների փոփոխությունը կրել է վարկի պայմանների ժամանակավոր փոփոխության բնույթ, ինչի արդյունքում պայմանագրային դրամական հոսքերի նկատմամբ իրավունքից իրաժարում է տեղի ունեցել սահմանված ժամկետում: 2016 թվականի ընթացքում Ընկերության վարկային ռիսկերի բաժինը դիտարկել է հաճախորդներից ստացված վարկերի վերակառուցման դիմումները, և վերակառուցվել են 1,133 վարկ 1,078,833 հազար դրամ ընդհանուր գումարով (2015թ. 512 վարկ 737,394 հազար դրամ գումարով): Ընդհանուր վերակառուցված վարկերի հաշվեկշռային արժեքը 31 դեկտեմբեր 2016 թվականի դրությամբ կազմում է 1,178,580 հազար դրամ (2015թ. 696,673 հազար դրամ):

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
 (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

9. Հիմնական միջոցներ

	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Կապի և հաղոր- դակցման միջոցներ	Գրասենյակային գույք	Փոխադ- րամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2015 թ. հունվարի 1	306,717	261,810	273,302	80,446	195,282	1,117,557
Ավելացում	14,836	18,986	25,059	-	23,970	82,851
Օտարում	(2,170)	(33,502)	(4,696)	(3,900)	(5,386)	(49,654)
Փոխանցումներ	(130)	50	130	-	(50)	-
2015 թ. դեկտեմբերի 31	319,253	247,344	293,795	76,546	213,816	1,150,754
Ավելացում	13,148	26,210	15,375	-	9,254	63,987
Օտարում	(12,457)	(363)	(1,817)	-	(2,210)	(16,847)
Փոխանցումներ	(123)	(20)	359	-	(216)	-
2016 թ. դեկտեմբերի 31	319,821	273,171	307,712	76,546	220,644	1,197,894
Կուտակված մաշվածություն						
2015 թ. հունվարի 1	100,652	193,668	130,170	57,066	87,003	568,559
Մաշվածության ծախս	31,680	46,322	46,956	10,080	36,902	171,940
Օտարում	(750)	(33,415)	(4,418)	(3,900)	(4,567)	(47,050)
Փոխանցումներ	-	50	-	-	(50)	-
2015 թ. դեկտեմբերի 31	131,582	206,625	172,708	63,246	119,288	693,449
Մաշվածության ծախս	34,001	30,042	46,377	10,080	36,282	156,782
Օտարում	(9,204)	(362)	(1,449)	-	(2,142)	(13,157)
Փոխանցումներ	(11)	198	28	-	(215)	-
2016 թ. դեկտեմբերի 31	156,368	236,503	217,664	73,326	153,213	837,074
Չուտ հաշվեկշռային արժեք						
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	163,453	36,668	90,048	3,220	67,431	360,820
2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	187,671	40,719	121,087	13,300	94,528	457,305
2015 թ. հունվարի 1-ի դրությամբ	206,065	68,142	143,132	23,380	108,279	548,998

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված, բայց դեռ օգտագործվող ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը կազմում էր 364,962 հազար և 225,573 հազար դրամ, համապատասխանաբար:

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել գրավադրված հիմնական միջոց:

«ՖԻՆԵԼ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

10. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2015 թ. հունվարի 1	192,532	192,532
Ավելացում	100,089	100,089
2015 թ. դեկտեմբերի 31	292,621	292,621
Ավելացում	86,440	86,440
2016 թ. դեկտեմբերի 31	379,061	379,061
Կուտակված ամորտիզացիա		
2015 թ. հունվարի 1	42,659	42,659
Ամորտիզացիայի ծախս	25,475	25,475
2015 թ. դեկտեմբերի 31	68,134	68,134
Ամորտիզացիայի ծախս	35,740	35,740
2016 թ. դեկտեմբերի 31	103,874	103,874
Չուտ հաշվեկշռային արժեք		
2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	275,187	275,187
2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	224,487	224,487
2015 թ. հունվարի 1-ի դրությամբ	149,873	149,873

11. Այլ ակտիվներ

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխավճարներ	36,456	26,162
Պաշարներ	10,137	9,147
Կանխավճարներ աշխատակիցներին	239	3,353
Այլ	11,279	5,191
Ընդամենը այլ ակտիվներ	58,111	43,853

12. Պարտավորություններ հետզնման պայմանագրերի գծով

Ընկերությունն ունի գործարքներ հետզնման համաձայնագրերով: Հետզնման համաձայնագրերով փոխատվություն տրված կամ վաճառված արժեթղթերը փոխանցվում են երրորդ կողմին Ընկերության կողմից ստացած կանխիկ դրամի փոխարեն: Այս ֆինանսական ակտիվները կարող են վերագրավադրվել կամ վերավաճառվել գործընկերների կողմից Ընկերության պարտավորությունների չկատարման (դեֆոլտի) բացակայության դեպքում, սակայն գործընկերը պարտավորվում է վերադարձնել արժեթղթերը պայմանագրի ավարտին: Ընկերության սահմանամբ այդ արժեթղթերի գծով հիմնական ռիսկերն ու օգուտները պահպանվել են և այդ իսկ պատճառով դրանք չեն ապաճանաչվել: Այս գործարքներն իրականացվում են այն պայմաններով, որոնք ընդունված են ստանդարտ վարկավորման և արժեթղթերի փոխառության ու վարկային գործունեության ժամանակ, ինչպես նաև այնպիսի փոխանակման գործարքներում, որտեղ Ընկերությունը հանդես է գալիս որպես կողմ:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտավորությունները ֆինանսական հատվածի կազմակերպությունների հետ կնքված հետզնման պայմանագրերի գծով կազմել է 1,196,795 հազար դրամ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 914,599 հազար դրամ): 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս պարտավորությունների գծով որպես զրավ տրված ակտիվների իրական արժեքը կազմել է 1,268,240 հազար դրամ, որն իրենից ներկայացնում է ՀՀ պետական պարտքային արժեթղթեր (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 948,971 հազար դրամ): Տե՛ս ծան. 7:

«ՖԻՆԵԸ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

13. Փոխառու միջոցներ

	<u>Արժույթ</u>	<u>Մարման ժամկետ</u>	<u>Անվանական տոկոսադրույթ %</u>	<u>2016 թ. դեկտեմ- բերի 31-ի դրությամբ</u>	<u>Անվանական տոկոսադրույթ %</u>	<u>2015 թ. դեկտեմ- բերի 31-ի դրությամբ</u>
Վարկեր բանկերից և ֆինանսական հաստատություն երից	ԱՄՆ դոլար	1-4 տարի	6.2-8%	16,694,295	5.7-8.5%	15,259,784
Վարկեր բանկերից և ֆինանսական հաստատություն երից	ՀՀ դրամ	2-5 տարի	11.6%-22.22%	3,630,431	14.5%-22.2%	7,446,242
Վարկեր ֆինանսական կազմակերպու յուն չհանդիսացող իրավաբանական անձանցից	ՀՀ դրամ	մինչև 1 տարի	6.25%	486,148	-	-
ՀՀ Կենտրոնական բանկից միջազգային ծրագրերով ստացված վարկեր	ՀՀ դրամ	5 տարի	6.75%	217,965	-	-
				<u>21,028,839</u>		<u>22,706,026</u>

2016 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի փոխառություններ ինը ֆինանսական հաստատություններից (2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ տասներկու ֆինանսական հաստատություններից), որոնց մնացորդներից յուրաքանչյուրը գերազանցում է սեփական կապիտալի 10%: Այս մնացորդների համախառն արժեքը 2016 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 20,111,054 հազար դրամ (2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 21,568,150 հազար դրամ): Պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով:

Ընկերությունը պարտավոր է համապատասխանություն ապահովել փոխառու միջոցներին առնչվող ֆինանսական պայմանների դրույթներին: Այս դրույթները ներառում են սահմանված գործակիցներ, պարտավորություն/սեփական կապիտալ հարաբերակցությունը և մի շարք այլ ֆինանսական գործակիցներ:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը խախտել էր ֆինանսական հաստատության հետ ունեցած պայմանագրային դրույթներից մեկը վարկային մեկ պայմանագրի գծով՝ բաց վարկային ռիսկերի գործակիցը (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2 խախտում): Հիմնվելով վարկատուների հետ ընթացիկ բանակցությունների և հաղորդակցության վրա, ինչպես նաև՝ նորմալ գործարար գործընթացի շրջանակներում տարեվերջին հաջորդող ժամանակաշրջանում նոր վարկային պայմանագրի ստացման հանգամանքի վրա, դեկավարությունը հաստատուն համոզվածություն ունի այն մասին, որ այս զիջումները և վերանայված պայմանագրերը կպաշտոնականացվեն: Ընկերության իրացվելիության դիրքի վերլուծության նպատակով դեկավարությունը համապատասխան փոխառությունները ներառել է ցպահանջ կարգում: Տե՛ս ծան. 26:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

14. Այլ պարտավորություններ

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ֆինանսական պարտավորություններ		
Պարտավորություններ անձնակազմի նկատմամբ	35,928	23,753
Պարտավորություններ մատուցած ծառայությունների գծով	107,695	114,417
Այլ	19,700	-
	163,323	138,170
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Արձակուրդի գծով պահուստ	163,392	195,525
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	109,585	114,967
Այլ	2,758	2,407
	275,735	312,899
Ընդամենը այլ պարտավորություններ	439,058	451,069

15. Ստորադաս փոխառություն

2009 թ. Ընկերությունը Finca Microfinance Fund B.V.-ից ստացել է 2,500,000 ԱՄՆ դոլարի ստորադաս փոխառություն: Finca Microfinance Fund B.V.-ի սեփականատերն է Հոլանդական Stichting holding Microfinance Fund անվանմամբ Հիմնադրամը, որի հիմնադիրն է Deutsche Bank-ը: Վարկը տրամադրված է 7 տարի ժամկետով 14,98% արդյունավետ տոկոսադրույքով:

2016 թ.-ի նոյեմբերի 11-ին ստորադաս փոխառությունն ամբողջովին մարվել է՝ հետվճարի գրաֆիկին համապատասխան:

16. Բաժնետիրական կապիտալ

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված, թողարկված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 490,596 սովորական բաժնետոմսերից՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Սովորական բաժնետոմսեր տնօրինողները իրավունք ունեն ստանալ շահաբաժիններ, որոնք հայտարարվում են ժամանակ առ ժամանակ և Ընկերության տարեկան ընդհանուր ժողովներին ունեն մեկ բաժնետոմսի դիմաց մեկ ձայնի իրավունք:

Ընկերության բաժնետիրական կապիտալը բաժնետերերի կողմից վճարվել է ՀՀ դրամով և նրանք իրավունք ունեն ստանալ շահաբաժիններ և կապիտալի բաշխում ՀՀ դրամով:

Ընկերության՝ բաժնետերերի միջև բաշխվող պահուստները սահմանափակվում են կուտակված և չբաշխված շահույթի գումարի չափով՝ արտահայտված Ընկերության ՀՀ օրենսդրության համապատասխան պատրաստված հաշվետվություններում: Զբաղիվող պահուստներն իրենցից ներկայացնում են պահուստային ֆոնդը, որը ստեղծված է օրենսդրության պահանջով: Ընկերության պահուստային ֆոնդը ձևավորվում է պարտադիր տարեկան հատկացումների միջոցով՝ հաշվարկված Ընկերության գուտ շահույթի 5%-ի չափով, մինչև ֆոնդը կազմի բաժնետիրական կապիտալի 15%-ը:

Պահուստի այս գումարը կարող է օգտագործվել Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային ֆոնդը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

2016 և 2015 թթ. Ընկերությունը չի հայտարարել շահաբաժիններ:

«ՖԻՆԵԼ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

17. Չուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստների գծով ծախսը

	2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ		
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտ</i>		
- հաճախորդներին տրված վարկեր	8,677,822	8,022,121
- դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	73,001	19,795
	8,750,823	8,041,916
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից տոկոսային եկամուտ	20,497	16,971
Վաճառքի համար մատչելի պետական արժեթղթերից տոկոսային եկամուտներ	74,464	32,106
Ընդամենը տոկոսային եկամուտ	8,845,784	8,090,993
Տոկոսային ծախս		
<i>Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններից տոկոսային ծախս</i>		
- փոխառու միջոցներ	2,231,617	2,404,547
- ստորադաս փոխառություն	141,748	162,854
	2,373,365	2,567,401
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից տոկոսային ծախս	329,422	371,989
Յետգնման համաձայնագրերի գծով տոկոսային ծախսեր	59,668	26,299
Ընդամենը տոկոսային ծախս	2,762,455	2,965,689
Չուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստների գծով ծախսը	6,083,329	5,125,304

18. Չուտ օգուտ արտարժույթային գործառնություններից

	2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դիվիդ, գուտ	110,866	116,857
Չուտ օգուտ/(վնաս) ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	1,699	(31,219)
Ընդամենը զուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	112,565	85,638

19. Անձնակազմի գծով ծախսեր

	2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ, պարգևավճարներ և այլ հատուցումներ աշխատակիցներին	2,114,666	2,308,814
Վերապատրաստման ծախսեր	6,835	13,643
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	2,121,501	2,322,457

«ՖԻՆԵԼ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

20. Այլ գործառնական ծախսեր

	2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ռոյալթի և կառավարման վճարներ	753,947	745,751
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	331,797	327,173
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	166,490	156,632
Ապահովագրության գծով ծախսեր	94,699	115,165
Կոմունալ ծախսեր	64,804	60,812
Գրասենյակային ծախսեր	51,961	55,064
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	42,349	45,633
Խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր	42,157	19,019
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	37,325	56,208
Անվտանգության ծախսեր	28,930	57,475
Գործուղման ծախսեր	24,107	34,136
Ներկայացուցչական ծախսեր	15,952	30,239
Հիմնական միջոցների դուրս գրումից կորուստ	3,690	2,604
Գովազդի ծախսեր	1,735	2,757
Տույժեր ու տուգանքներ	322	275
Այլ ծախսեր	159,124	130,660
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	1,819,389	1,839,603

21. Շահութահարկ

Ընկերությունը գնահատում և գրանցում է իր ընթացիկ վճարվելիք շահութահարկը և իր ակտիվների և պարտավորությունների հարկային բազան համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, որը տարբերվում է ՖՀՄՍ-ից:

Ընկերությունն ունի որոշակի մշտական հարկային տարբերություններ, որոնք առաջանում են շահութահարկի նպատակներով չնվազեցվող որոշակի ծախսերից և շահութահարկի նպատակներով չհարկվող որոշակի եկամուտներից:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների նկատմամբ, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և դրանց հարկման բազաների միջև: 2016 և 2015 թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա ժամանակավոր տարբերությունները մեծամասնորեն վերաբերում են եկամուտի և ծախսի ճանաչման համար տարբեր մեթոդների/ժամկետների կիրառությանը, ինչպես նաև որոշակի ակտիվների հարկային և հաշվեկշռային բազաների ժամանակավոր տարբերություններին:

Ստորև բերված հաշվարկներում օգտագործվում է ներկայիս հարկի դրույքաչափը՝ 20%, որը ՀՀ-ում վճարում են կորպորատիվ ձեռնարկությունները հարկվող շահույթի համար (ինչպես սահմանված է) ՀՀ հարկային օրենսդրության համապատասխան:

«ՖԻՆԵԺ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

Ժամանակավոր տարբերությունները 2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Յետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ) հետևյալի գծով՝</i>		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	(10,656)	5,096
Հաճախորդներին տրված վարկեր	807	107,856
Հիմնական միջոցներ	8,672	2,503
Այլ ակտիվներ	(1,741)	(1,330)
Փոխառու միջոցներ	(10,274)	(10,322)
Այլ պարտավորություններ	42,193	42,463
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	29,001	146,266
	2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շահույթ՝ մինչև շահութահարկը	748,615	78,794
Սահմանված դրույթաչափով հարկ (20%)	149,723	15,759
Մշտական տարբերություններից հարկի ազդեցությունը	6,803	9,294
Նախորդ տարվան վերաբերվող ընթացիկ հարկային ծախս	-	8,678
Շահութահարկի գծով ծախս	156,526	33,731
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	55,012	36,333
Նախորդ տարվան վերաբերվող ընթացիկ հարկային ծախս	-	8,678
Յետաձգված հարկային ծախս/(օգուտ)՝ ճանաչված ընթացիկ տարում	101,514	(11,280)
Շահութահարկի գծով ծախս	156,526	33,731
	2016 թ.	2015 թ.
Յետաձգված հարկային ակտիվներ		
Հունվարի 1-ի դրությամբ հետաձգված հարկային ակտիվներ	146,266	129,890
Շահույթում կամ վնասում ընթացիկ տարում ճանաչված հարկային (ծախս)/օգուտ	(101,514)	11,280
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների պահուստում ճանաչված հետաձգված հարկի մնացորդների տարբերություն	(15,751)	5,096
Դեկտեմբերի 31-ի դրությամբ հետաձգված հարկային ակտիվներ	29,001	146,266

22. Պայմանական պարտավորություններ

Գործունեության բնականոն ընթացքում Ընկերությունը կնքում է հետհաշվեկշռային ռիսկեր ունեցող ֆինանսական գործիքներ, որպեսզի բավարարի հաճախորդների կարիքները: Այս գործիքները, որոնք ներառում են վարկային ռիսկի տարբեր աստիճաններ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ընկերությունն հետհաշվեկշռային պարտավորությունները ստանձնելիս օգտագործում է նույն վարկային վերահսկողության և կառավարման քաղաքականությունը, ինչն օգտագործում է հաշվեկշռային գործառնությունների ժամանակ:

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պայմանական պարտավորությունների կորուստների համար պահուստներ չունի:

Կապիտալի պարտավորություններ. 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի կապիտալ ներդրման պարտավորություն (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի կապիտալ ներդրման պարտավորություն):

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով. Ընկերությունը գործառնական վարձակալությամբ վարձակալում է մի շարք գրասենյակային տարածքներ: Սովորաբար վարձակալության ժամկետը տևում է 3-5 տարի: Վարձակալության վճարները յուրաքանչյուր 2-3 տարին մեկ վերանայվում են՝ շուկայական վարձավճարներն արտացոլելու

«ՖԻՆԵԸ» ՈՒՆԻԿԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

համար: Որոշակի վարձակալություններ տրվում են հավելյալ վարձավճարով, որը հիմնված է տեղական գնային ինդեքսի փոփոխությունների վրա:

Երբ Ընկերությունը հանդիսանում է վարձակալ, չդադարեցվող գործառնական վարձակալությամբ վերցված գրասենյակների ապագա նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է՝

	2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մինչև 1 տարի	302,784	317,103
1-5 տարի	437,831	585,122
5 տարուց ավելի	55,961	105,537
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	796,576	1,007,762

Պատական վարույթներ. Գործունեության բնականոն ընթացքում Ընկերությունը ենթարկվում է դատական վարույթների և բողոքների ռիսկերի: Ղեկավարությունը համոզված է, որ նման դատական վարույթները և բողոքներն անբարենպաստ ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ Ընկերության ապագա գործունեության արդյունքների վրա, ուստի ֆինանսական հաշվետվություններում ոչ մի պահուստ չի ստեղծվել:

Հարկային օրենսդրություն. Հայաստանի Հանրապետության առևտրային համակարգը կարգավորող օրենսդրությունը, ներառյալ հարկային օրենսդրությունը, կարող է ունենալ մեկից ավելի մեկնաբանություններ: Ավելին, վտանգ կա, որ հարկային մարմինները կամայական դատողություններ կարող են անել ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ: Եթե Ընկերության գործունեության վերաբերյալ ղեկավարության որոշակի որոշումներ հարկային մարմինների կողմից վիճարկվեն, Ընկերությունը կարող է ենթարկվել հավելյալ հարկերի, տույժերի և տոկոսների:

Սովորաբար հարկային ստուգումը վերաբերում է ստուգման տարվան նախորդող երեք օրացուցային տարիներին:

Գործարար միջավայր. Չարգացող երկրների ֆինանսական շուկաները, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ավելի շատ են ենթարկվում գանազան ռիսկերի, քան ավելի զարգացած երկրների շուկաները, ներառյալ տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավական և օրենսդրական ռիսկերը: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների: Հայաստանը դեռևս գտնվում է տնտեսական և քաղաքական փոփոխությունների գործընթացում: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի այն աստիճան զարգացած գործարար և կանոնակարգային ենթակառուցվածք, որը բնորոշ է ավելի հասուն ազատ շուկայական տնտեսություններին: Ի լրումն, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների գործունեության ծավալները, ինչը թերևս չի արտացոլում ֆինանսական գործիքների արժեքները: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտ են հանդիսանում տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակը և տնտեսավարման կենտրոնացվածությունը, տարածաշրջանային անկայունությունները և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Համաշխարհային ֆինանսական համակարգերում համակարգային ռիսկերը, այդ թվում՝ վարկային շուկաների իրադրության վատթարացումը կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության կապիտալի և դրա հասանելիության, ավելի ընդհանրականորեն՝ գործունեության արդյունքների, ֆինանսական դրության և հեռանկարների վրա: Ավելին, դեռևս առկա են անորոշություններ՝ կապված երկրների տնտեսական իրավիճակի հետ, որը կարող է հանգեցնել արտասահմանից ներհոսող դրամական միջոցների պակասորդի, ինչպես նաև հանքարդյունաբերական արտադրանքի գների անկման, որը մեծապես որոշիչ դեր է խաղում ՀՀ տնտեսության համար: Առավել խիստ զգալի շուկայական սպառնալիքների և դժվարությունների արդյունքում ՀՀ տնտեսությունը, ինչպես նաև Ընկերության գործունեությունը կարող են վատթարանալ: Այնուամենայնիվ, քանի որ նման ենթադրությունների հիմքում ընկած են բազմաթիվ փոփոխական պայմաններ և անորոշություններ, ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե վերը նշված գործոնների ազդեցությունը դիտարկելի և արժանահավատորեն չափելի դառնար ՀՀ համար:

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի		2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	
	Գործարքներ կապակցված կողմերի հետ	Ընդհանուր դասն ըստ ֆինանսական հաշվետվությունների	Գործարքներ կապակցված կողմերի հետ	Ընդհանուր դասն ըստ ֆինանսական հաշվետվությունների
Ղեկավար անձնակազմի վարձատրություն (ծան. 19)				
- կարճաժամկետ վճարումներ աշխատակիցներին	161,693	2,121,501	183,008	2,322,457

2016 և 2015 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության առանցքային ղեկավար անձնակազմը բաղկացած է եղել 3 պաշտոնից:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)**

24. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

ՖՀՄՍ-ն սահմանում է իրական արժեքը որպես գումար, որով ակտիվը կարող է վաճառվել կամ պարտավորությունը փոխանցվել շուկայի մասնակիցների միջև սովորական պայմաններով ընթացող գործարքում չափման ամսաթվի դրությամբ: Այստեղ ներկայացված գնահատումները պարտադիր կերպով չեն արտացոլում այն գումարները, որոնք Ընկերությունը կարող է ստանալ որոշակի գործիքի շուկայական փոխանակման արդյունքում:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է դատողություն որպեսզի մեկնաբանվեն շուկայական տվյալները շուկայական տվյալները, գնահատված իրական արժեքը որոշելու համար: Հայաստանի Հարապետության շուկան կարելի է բնութագրել որպես զարգացող, և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաներում գործունեության ծավալները: Շուկայի գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել վաճառքի գործարքների կրճատում և արդյունքում չեն արտացոլի ֆինանսական գործիքների իրական արժեքները: Դեկավարությունն օգտագործել է շուկայի ամբողջ հասանելի տեղեկատվությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս:

Ընկերության` շարունակական հիմունքներով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը. Ընկերության որոշ ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է նշված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի որոշման մեթոդները (մասնավորապես` օգտագործված գնահատման մեթոդները և ելակետային տվյալները):

Ֆինանսական ակտիվներ/Ֆինանսական պարտավորություններ	Իրական արժեք		Ֆինանսական ակտիվներ/Ֆին. պարտավորություններ	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ֆինանսական ակտիվներ/Ֆին. պարտավորություններ
	2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ				
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ/ (պարտավորություններ) արտարժույթային սվոփեր	-	4,144	Սակարդակ 3	Չեղչված դրամական հոսքեր. Ապագա դրամական հոսքերը գնահատվում են` հիմք ընդունելով ֆորվարդային փոխարժեքները և պայմանագրով սահմանված ֆորվարդային դրույթաչափերը, զեղչված այն դրույթաչափով, որն արտացոլում է տարբեր պայմանագրային կողմերի վարկային ռիսկերը	Ֆորվարդային փոխարժեքները օգտագործելով գնողունակության համարժեքության և տոկոսադրույթի համարժեքության միասնությունը	Ռբբան բարձր են ֆորվարդային և փոխարժեքները, այնքան բարձր է իրական արժեքը:
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,268,240	948,971	Սակարդակ 1	Գնանշումներ ակտիվ շուկայում	4/2	4/2
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ/ (պարտավորություններ)	(58,338)	(91,991)	Սակարդակ 3	Չեղչված դրամական հոսքեր. Ապագա դրամական հոսքերը գնահատվում են` հիմք ընդունելով ֆորվարդային	Ֆորվարդային օգտագործելով գնողունակության համարժեքության և տոկոսադրույթի	Ռբբան բարձր են ֆորվարդային և փոխարժեքները, այնքան բարձր է

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

-յուններ) արտարժույթ- ային սվոփեր	փոխարժեքները և պայմանագրով սահմանված Ֆորվարդային դրույթաչափերը, զեղչված այն դրույթաչափով, որն արտացոլում է տարբեր պայմանագրային կողմերի վարկային ռիսկերը	համարժեքությամբ յան միասնությունը	իրական արժեքը:
---	--	---	-------------------

Ֆինանսական ակտիվների մակարդակ 3-ի իրական արժեքով չափումների համեմատագրումը ներկայացված է ստորև՝

	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ / (պարտավորություններ)	
	2016 թ.	2015 թ.
1 հունվարի	(87,847)	106,065
Ընդամենը օգուտներ կամ վնասներ		
- Շահույթում կամ վնասում	(319,386)	(333,078)
Մարումներ	348,895	139,166
31 դեկտեմբերի	(58,338)	(87,847)

Ընկերության՝ ոչ շարունակական հիմունքներով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը. Հաշվի առնելով մի շարք ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթը՝ ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին: Որոշակի այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ղեկավարությունն օգտագործում է զեղչված դրամական հոսքերը՝ իրական արժեքը գնահատելու համար: Այս գնահատված դրամական միջոցների հոսքերի զեղչման համար օգտագործված տոկոսադրույթները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի վրա, գումարած արժույթը, գործիքի ժամկետայնության, կողմի վարկային ռիսկի վրա:

25. Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը, միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրաված և սեփական միջոցների հավասարակշռության օպտիմալացման ճանապարհով:

ՀՀ կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, ունիվերսալ վարկային կազմակերպությունները 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 150,000 հազար ՀՀ դրամ նվազագույն բաժնետիրական կապիտալ (2015 թ. դեկտեմբերի 31-ին՝ 150,000 հազար ՀՀ դրամ):

Համաձայն ՀՀ ԿԲ կանոնակարգային պահանջների, որոնք ուժի մեջ են մտել 2011 թ.-ին, վարկային կազմակերպությունները, որոնք իրականացնում են արտարժույթի փոխանակման գործառնություններ կանխիկով, վարկային մարումներից բացի այլ պատճառներով, պարտավոր են ապահովել կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (կապիտալի հարաբերակցության կանոնադրական պահանջ) նվազագույնից բարձր մակարդակով: 2013 թ.-ին Ընկերությունն իր կանոնադրությունում կատարել է փոփոխություն՝ սահմանելով արտարժույթի փոխանակման գործառնությունները որպես գործունեության առանձին տեսակ, այդպիսով՝ Ընկերությունը պարտավոր է իր կանոնադրական կապիտալի և կապիտալի հարաբերակցության պահանջը պահպանել և կատարել համապատասխան չափում: 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի ընդհանուր պահանջը կազմում է 1,000,000 հազար ՀՀ դրամ 10% նվազագույն կապիտալի հարաբերակցությամբ (2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,000,000 հազար ՀՀ դրամ 10% նվազագույն կապիտալի հարաբերակցությամբ):

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

Հետևյալ աղյուսակը վերլուծում է Ընկերության կապիտալ ռեսուրսները կապիտալի համարժեքության նպատակներով՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքների:

	31 դեկտեմբերի 2016 թ. աուդիտ չարված	31 դեկտեմբերի 2015 թ. աուդիտ չարված
Սկզբնական կապիտալ	5,862,106	5,263,044
Լրացուցիչ կապիտալ	-	-
Ընդամենը կապիտալ	5,862,106	5,263,044
Ռիսկով կշռված ակտիվներ	26,920,782	29,810,590
Կանոնադրական կապիտալի հարաբերակցությունը (%)	22%	18%
Կանոնակարգային նվազագույն պահանջը կանոնադրական կապիտալի հարաբերակցության գծով (%)	10%	10%
Համապատասխանություն նվազագույն բաժնետիրական կապիտալի պահանջներին	Խախտումներ չեն արձանագրվել 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Խախտումներ չեն արձանագրվել 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

Տնօրինությունը վերանայում է կապիտալի կառուցվածքը կիսամյակային կտրվածքով: Ընկերության կապիտալի համարժեքությունը սահմանվում է վերահսկվում է՝ օգտագործելով ՀՀ ԿԲ կողմից սահմանված սահմանաչափերը: Որպես նման վերանայման մի մաս, Խորհուրդը դիտարկում է կապիտալի ինքնարժեքը և կապիտալի յուրաքանչյուր դասին առնչվող ռիսկերը: Խորհրդի առաջարկությունների հիման վրա Ընկերությունն իր ընդհանուր կապիտալի կառուցվածքը կառուցում է շահաբաժինների վճարման, նոր բաժնետոմսերի թողարկման, ինչպես նաև նոր պարտքի կամ գործող պարտքի մարման միջոցով: Ի լրումն, Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ պայմանագրային պահանջների իրականացման համար:

26. Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումն Ընկերության բիզնեսի հիմնարար տարրերից է և Ընկերության գործունեության էական բաղկացուցիչը: Ընկերության գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերն են՝

- վարկային ռիսկը,
- իրացվելիության ռիսկը,
- շուկայական ռիսկը:

Ընկերությունն ընդունում է, որ անհրաժեշտ է ունենալ ռիսկերի կառավարման արդյունավետ և նպատակային գործընթացներ: Նշվածն իրականացնելու համար Ընկերությունը ստեղծել է ռիսկերի կառավարման հայեցակարգ, որի հիմնական նպատակն է պաշտպանել Ընկերությունը ռիսկերից և թույլ տալ նրան հասնելու իր գործունեության նպատակներին:

Ընկերության ռիսկերի կառավարման նպատակների սահմանման և քաղաքականությունների մշակման ընդհանուր պատասխանատվությունը կրում է Տնօրենների խորհուրդը: Տնօրենների խորհրդի ընդհանուր նպատակն է սահմանել քաղաքականություններ, որոնք հնարավորինս կնվազեցնեն ռիսկերն առանց անհարկի վատթարացնելու Ընկերության մրցունակությունն և ճկունությունը: Պահպանելով վերջնական պատասխանատվությունը՝ այն միաժամանակ փոխանցել է իրավասություններն Ընկերության ֆինանսական բաժնին՝ նախագծելու և գործարկելու գործընթացներ, որոնք կապահովեն նպատակների և քաղաքականությունների արդյունավետ իրականացումը:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը սահմանված են՝ Ընկերության ռիսկերի հայտնաբերման և վերլուծության նպատակով, որը թույլ կտա սահմանել ռիսկերի և վերահսկողությունների համապատասխան սահմանաչափեր, վերահսկել ռիսկերը և ապահովել սահմանաչափերի հետ համապատասխանությունը: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը վերանայվում են կանոնավոր կերպով՝ շուկայի պայմանների, առաջարկվող ապրանքների և ծառայությունների փոփոխությունների արտացոլման նպատակով: Վերապատրաստման և կառավարման ստանդարտների միջոցով Ընկերությունը նպատակ ունի

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Չափար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)

կառուցել համակարգված և կառուցողական վերահսկողական միջավայր, որտեղ աշխատակիցները կպատկերացնեն իրենց դերը և պարտականությունները:

Վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերը թե պորտֆելի և թե գործարքների մակարդակով կառավարվում և վերահսկվում են Վարկային կոմիտեների և ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (այսուհետ՝ ԱՊԿԿ) միջոցով: ԱՊԿԿ-ն պատասխանատու է ռիսկերի կառավարման քաղաքականության, ընթացակարգերի մշակման, վերահսկողության և օրենսդրական/կանոնակարգային դաշտում առկա ռիսկերի վերահսկողության համար և գնահատում է դրանց ազդեցությունը Ընկերության գործունեության վրա: Այս մոտեցումը թույլ է տալիս Ընկերությանը նվազեցնել 33 ներդրումային միջավայրի փոփոխությունների դեպքում Ընկերությանը սպառնացող հնարավոր կորուստները:

Վարկային ռիսկ

Ընկերությունը ենթակա է վարկային ռիսկի, այն է՝ ռիսկ, որ ֆինանսական գործիքի մի կողմը չի կատարի իր պարտավորությունը՝ ֆինանսական կորուստներ պատճառելով մյուս կողմին:

Ընկերության հիմնական գործունեությունը միկրովարկերի տրամադրումն է: Համապատասխանաբար, վարկային ռիսկը մեծագույն կարևորություն ունի միկրոֆինանսավորման կազմակերպությունների ռիսկերի կառավարման մեջ: Չգալի ֆինանսական վնասներից խուսափելու համար Ընկերությունը կիրառում է տարբեր մեթոդներ վարկային ռիսկերը որոշելու և արդյունավետորեն կառավարելու նպատակով:

Միկրոֆինանսավորման ոլորտը ընդհանուր առմամբ հակված է վարկային ռիսկի՝ հաճախորդներին տրամադրվող վարկերի և բանկային ավանդների միջոցով: Ինչ վերաբերում է հաճախորդներին տրված վարկերին, այս ռիսկը կենտրոնացած է Հայաստանի Հանրապետությունում:

Ռիսկերի կառավարումը և մոնիտորինգն իրականացվում է սահմանված լիազորությունների շրջանակներում: Այս գործընթացներն իրականացվում են Վարկային կոմիտեների և Ընկերության Տնօրենների խորհրդի կողմից: Նախքան որևէ հայտի կազմումը Վարկային կոմիտեի կողմից, բոլոր առաջարկությունները վարկային գործընթացի վերաբերյալ (վարկառուի սահմանաչափի հաստատում կամ վարկային պայմանագրերի մեջ ուղղումների կատարում և այլն) վերանայվում և հաստատվում են վարկային ռիսկերի բաժնի կողմից: Առօրյա ռիսկերի կառավարումն իրականացվում է վարկային ռիսկերի բաժնի ղեկավարի և ներքին վերահսկողության բաժինների կողմից:

Ընկերության վարկային քաղաքականությունը սահմանված է մի շարք ներքին քաղաքականություններում և ընթացակարգերում, որտեղ հստակ սահմանված են բոլոր առնչվող ընթացակարգերը և պահանջները համապատասխան վերահսկողական մեխանիզմների հետ մեկտեղ, ներառյալ վարկի տրամադրումը, չվճարված վարկերի մոնիտորինգը և այլն:

Վարկային կոմիտեն վերլուծող մարմինն է, որը պատասխանատու է վարկային հայտերում ամփոփված տեղեկատվությունը վերլուծելու և վարկային ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար: Վարկային կոմիտեն Ընկերության ներսում անկախ մարմին է, որը լիազորված է կայացնելու վերջնական որոշում վարկային հայտը ֆինանսավորելու կամ մերժելու վերաբերյալ:

Վարկային կոմիտե ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը վարկային մասնագետի պատասխանատվությունն է, ով լրացնում է նախնական հայտը դիմողի բիզնեսի և վարկային ռիսկերի պատշաճ ուսումնասիրությունից հետո: Ի վերջո Վարկային կոմիտեի անդամները գնահատում են հայտի համապատասխանությունը սահմանված չափանիշներին (դիմողի վարկային պատմությունը, ֆինանսական վիճակը, մրցակցային ունակությունը և այլն):

Յուրաքանչյուր մասնաճյուղ պարտավոր է կիրառել Ընկերության վարկային քաղաքականությունները և ընթացակարգերը՝ Ընկերության վարկային կոմիտեից ստացված վարկային հաստատման սահմանաչափի շրջանակներում: Յուրաքանչյուր մասնաճյուղի մենեջեր վարկային բոլոր տեսակի խնդիրների վերաբերյալ զեկուցում է տնօրինությանը և վարկային կոմիտեին: Յուրաքանչյուր մասնաճյուղ պատասխանատու է իր վարկային պորտֆելի որակի և կատարողականի համար, ինչպես նաև իր պորտֆելի ներսում առկա ռիսկերի վերահսկողության և մոնիտորինգի համար: Ներքին աուդիտի և ներքին վերահսկողության բաժինները իրականացնում են մասնաճյուղերի և Ընկերության վարկային գործընթացների կանոնավոր ստուգումներ:

Ընկերության վարկային ռիսկերի բաժինը ուսումնասիրում է ժամկետանց վարկերի վերլուծությունը և հետամուտ է լինում ժամկետանց մնացորդներին: Դեկավարությունը, հետևաբար, տեղին է համարում ժամկետանց վարկերի և այլ վարկային ռիսկերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

Ընկերությունը բաշխում է վարկային ռիսկի մակարդակը՝ սահմանափակելով մեկ վարկառուի գծով կամ վարկառուների խմբի գծով, ինչպես նաև ըստ տնտեսության և աշխարհագրական սեգմենտների ռիսկի չափերը: Վարկային ռիսկի սահմանաչափերն ըստ վարկառուի և ըստ վարկատեսակի հաստատում է Տնօրենների խորհուրդը: Վարկառուի գծով ռիսկը հետագայում սահմանափակվում է ենթասահմանաչափերով, որոնք վերաբերում են հաշվեկշռային և հետհաշվեկշռային ռիսկերին և սահմանվում են վարկային կոմիտեի կողմից: Փաստացի ռիսկերի համապատասխանությունը սահմանաչափերին հսկվում է օրական կտրվածքով՝ ապահովելու համար, որ Ընկերության կողմից սահմանված վարկային սահմանաչափերը և վարկունակության ուղեցույցները չեն խախտվում:

Ըստ նպատակահարմարության, և վարկերի մեծ մասի դեպքերում, Ընկերությունն ընդունում է գրավ կամ անձնական երաշխավորություն: Այնուամենայնիվ, վարկերի զգալի մասն անհատական են, որտեղ այսպիսի ապահովության միջոցներ չեն կարող ձեռք բերվել: Այսպիսի ռիսկերը մոնիտորինգի են ենթարկվում շարունակական հիմունքով և ենթակա են տարեկան կամ ավելի հաճախակի վերանայումների:

Վերանայված պայմաններով վարկեր. Վերանայված պայմաններով վարկերն իրենցից ներկայացնում են վարկեր, որոնք վերակառուցվել են՝ վարկառուի ֆինանսական դրության վատթարացման արդյունքում, և Ընկերությունը կատարել է զիջումներ, որոնք այլապես չէր դիտարկի: Վարկի վերակառուցման դեպքում այն մնում է այդ դասում անկախ նրանից, որ վերակառուցումից հետո դրա կատարողականը եղել է բավարար:

Վերանայված պայմաններով ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	<u>31 դեկտեմբերի, 2016 թ.</u>	<u>31 դեկտեմբերի, 2015 թ.</u>
Հաճախորդներին տրված վարկեր	1,178,580	696,673

Արժեզրկման պահուստ. Ընկերությունը սահմանում է պահուստ արժեզրկումից կորուստների գծով, որն իրենից ներկայացնում է վարկային պորտֆելում կրած վնասների գնահատումը: Այս պահուստի հիմնական բաղկացուցիչը իրենից ներկայացնում է վարկերի գծով կորուստների խմբակային պահուստ, որը սահմանված է Ընկերության համասեռ ակտիվների գծով՝ կապված այն վնասների հետ, որոնք հաշվեզրկվել են, սակայն չեն վերագրվել վարկերին:

Վարկային ռիսկի առավելագույն չափը. Ընկերության վարկային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է և անհատական ռիսկերից, և ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է վարկային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին՝ նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

	<u>2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>	<u>2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</u>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	840,392	627,333
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	4,144
Հաճախորդներին տրված վարկեր	26,015,468	28,240,546
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,268,240	948,971
	<u>28,124,100</u>	<u>29,820,994</u>

Հետհաշվեկշռային ռիսկ. Ընկերությունը սկզբունքայնորեն կիրառում է միևնույն ռիսկերի կառավարման քաղաքականությունը հետհաշվեկշռային ռիսկերի համար, ինչը կիրառում է հաշվեկշռային ռիսկերի համար:

Աշխարհագրական համակենտրոնացում. Ընկերության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական համակենտրոնացումը 2016 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

	Հայաստանի Հանրապետություն	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,267,703	-	1,267,703
Հաճախորդներին տրված վարկեր	26,015,468	-	26,015,468
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,268,240	-	1,268,240
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	28,551,411	-	28,551,411
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Պարտավորություններ հետզնման պայմանագրերով	1,196,795	-	1,196,795
Փոխառու միջոցներ	2,159,014	18,869,825	21,028,839
Այլ ֆինանսական պարտավորություններ	163,323	-	163,323
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	3,519,132	18,869,825	22,388,957
Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների զուտ դիրքը	25,032,279	(18,869,825)	6,162,454
Համախառն մարվող արժույթային սվոփեր	-	(58,338)	(58,338)
Չուտ դիրքը	25,032,279	(18,928,163)	6,104,116

Ընկերության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական համակենտրոնացումը 2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև՝

	Հայաստանի Հանրապետություն	ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,190,298	-	1,190,298
Հաճախորդներին տրված վարկեր	28,240,546	-	28,240,546
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	948,971	-	948,971
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	30,379,815	-	30,379,815
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Փոխառու միջոցներ	2,247,744	20,458,282	22,706,026
Այլ ֆինանսական պարտավորություններ	138,170	-	138,170
Ստորադաս փոխառություններ	-	1,231,024	1,231,024
Պարտավորություններ հետզնման պայմանագրերով	914,599	-	914,599
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	3,300,513	21,689,306	24,989,819
Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների զուտ դիրքը	27,079,302	(21,689,306)	5,389,996
Համախառն մարվող արժույթային սվոփեր	4,144	(91,991)	(87,847)
Չուտ դիրքը	27,083,446	(21,781,297)	5,302,149

Ընկերությունն իրականացնում է բազմաթիվ գործարքներ, որտեղ գործընկերները վարկանշված չեն միջազգային վարկանշային գործակալությունների կողմից: Ընկերությունը մշակել է ներքին մոդելներ, որոնք թույլ են տալիս նրան որոշելու գործընկերների վարկանիշները, որոնք համադրելի են միջազգային վարկանիշային գործակալությունների վարկանիշների հետ:

Ընկերությունում մշակվել է վարկառուի գնահատման սթորինգային մոդել՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունները գնահատելու և դրանց վարկավորման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով: Սթորինգային մոդելը մշակվել է ստանդարտ վարկատեսակների համար և ներառում է վարկառուների արդյունավետության հիմնական ցուցանիշները՝ ֆինանսական վիճակը, վարկառուների

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

հետ հարաբերությունները, կառավարման որակը, նպատակային օգտագործումը, տեղը, վարկային պատմությունը, գրավը և այլն:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկի կառավարումը. Իրացվելիության ռիսկը վերաբերում է բավարար միջոցների առկայությանը՝ բավարարելու ավանդների հետվերադարձման և այլ ֆինանսական պարտավորվածությունների գծով պահանջները, երբ փաստացի այդ ֆինանսական գործիքների ժամկետը լրանում է:

Ընկերության մոտեցումը իրացվելիության կառավարման խնդրին կայանում է նրանում, որպեսզի հնարավորինս ապահովվի բավարար իրացվելիություն պարտավորությունների մարման համար, թե՛ ընթացիկ, թե՛ սթրեսային իրավիճակներում՝ առանց Ընկերության վարկանիշին անընդունելի վնաս հասցնելու կամ կորուստներ առաջացնելու:

ԱՊԿԿ-ն (ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե) վերահսկում է այս տեսակի ռիսկերը ժամկետայնության վերլուծության միջոցով՝ որոշելով Ընկերության ռազմավարությունը հաջորդ ֆինանսական ժամանակաշրջանի համար: Ընթացիկ իրացվելիությունը կառավարվում է գանձապետի կողմից, ով վարում է կարճաժամկետ իրացվելի ակտիվների պորտֆելը, որը հիմնականում բաղկացած է կարճաժամկետ ավանդներից, ընթացիկ իրացվելիության աջակցման և դրամական հոսքերի օպտիմալացման նպատակով:

Իրացվելիության և տոկոսադրույքի ռիսկի վերլուծությունը ներկայացված է հետևյալ աղյուսակում:
Ստորև ներկայացվածը հիմնված է Ընկերության ղեկավար անձնակազմին տրամադրված ներքին տեղեկատվության վրա:

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը 2016 թ. դեկտ. 31-ի դրությամբ
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
<i>Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5.47%	840,392	-	-	-	840,392
Հաճախորդներին տրված վարկեր	35.93%	329,656	2,379,023	10,597,214	12,709,575	26,015,468
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ		1,268,240	-	-	-	1,268,240
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ		2,438,288	2,379,023	10,597,214	12,709,575	28,124,100
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		427,311	-	-	-	427,311
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		427,311	-	-	-	427,311
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ		2,865,599	2,379,023	10,597,214	12,709,575	28,551,411
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
<i>Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ</i>						
Փոխառու միջոցներ	8.72%	1,007,797	1,321,228	4,336,522	10,998,909	17,664,456
Պարտավորություններ հետգնման պայմանագրերով	3.55%	1,196,795	-	-	-	1,196,795
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		2,204,592	1,321,228	4,336,522	10,998,909	18,861,251
<i>Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ</i>						
Փոխառու միջոցներ	12.14%	3,150,681	6,476	207,226	-	3,364,383
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		3,150,681	6,476	207,226	-	3,364,383
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ</i>						
Այլ ֆինանսական պարտավորություններ		156,123	-	7,200	-	163,323
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		156,123	-	7,200	-	163,323
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		5,511,396	1,327,704	4,550,948	10,998,909	22,388,957
Տոկոսադրույքի զգայունության տարբերություն		(2,916,985)	1,051,319	6,053,466	1,710,666	
Տոկոսադրույքի զգայունության կուտակային տարբերություն		(2,916,985)	(1,865,666)	4,187,800	5,898,466	
Ածանցյալ ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժույթային սվոփեր		-	(13,691)	-	(44,647)	
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության տարբերություն		(2,645,797)	1,037,628	6,046,266	1,666,019	
Ֆինանս. ակտիվների և պարտավոր. կուտակային իրացվելիության տարբերություն՝ աճողական կարգով		(2,645,797)	(1,608,169)	4,438,097	6,104,116	

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Չազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)**

	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ						
<i>Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	0.2%	627,333	-	-	-	627,333
Հաճախորդներին տրված վարկեր	35.04%	389,258	3,241,816	13,722,307	10,887,165	28,240,546
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	6.9%	948,971	-	-	-	948,971
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ		1,965,562	3,241,816	13,722,307	10,887,165	29,816,850
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		562,965	-	-	-	562,965
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական ակտիվներ		562,965	-	-	-	562,965
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ		2,528,527	3,241,816	13,722,307	10,887,165	30,379,815
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ						
<i>Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ</i>						
Փոխառու միջոցներ	9.83%	502,473	3,225,060	5,637,311	6,878,527	16,243,371
Ստորադաս փոխառություն	14.14%	-	-	1,231,024	-	1,231,024
Պարտավորություններ հետզնման պայմանագրերով	11.90%	914,599	-	-	-	914,599
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		1,417,072	3,225,060	6,868,335	6,878,527	18,388,994
<i>Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ</i>						
Փոխառու միջոցներ	15.18%	3,750,900	2,713	1,838,292	870,750	6,462,655
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ		3,750,900	2,713	1,838,292	870,750	6,462,655
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ</i>						
Սյլ ֆինանսական պարտավորություններ		138,170	-	-	-	138,170
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ		138,170	-	-	-	138,170
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		5,306,142	3,227,773	8,706,627	7,749,277	24,989,819
Տոկոսադրույքի զգայունության տարբերություն		(3,202,410)	14,043	5,015,680	3,137,888	
Տոկոսադրույքի զգայունության կուտակային տարբերություն		(3,202,410)	(3,188,367)	1,827,313	4,965,201	
Ածանցյալ ֆինանսական գործիքներ						
Համախառն մարվող արժույթային սվոփեր		4,144	-	-	(91,991)	
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրացվելիության տարբերություն		(2,773,471)	14,043	5,015,680	3,045,897	
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կուտակային իրացվելիության տարբերություն՝ աճողական կարգով		(2,773,471)	(2,759,428)	2,256,252	5,302,149	

Ակտիվների և պարտավորությունների կուտակային իրացվելիության տարբերություն՝ աճողական կարգով. Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծությունը ըստ պայմանագրով նախատեսված մարման ժամկետների: Վերը նշված գումարները փոփոխական տոկոսադրույքով գործիքների համար՝ ֆինանսական

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն) (Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

ակտիվների և պարտավորությունների գծով, ենթակա են փոփոխման, եթե փոփոխական տոկոսադրույքներում փոփոխությունները տարբերվեն հաշվետու ժամանակաշրջանի վերջում որոշված տոկոսադրույքների գնահատականներից: Արժեզրկված ակտիվները ներկայացված են հաշվեկշռային արժեքներով՝ հանած արժեզրկման գծով պահուստը և հիմնված են դրամական միջոցների ներհոսքի ակնկալվող ժամկետների վրա: Ինչպես ներկայացված է ծան. 13-ում, հաշվետու ամսաթվի դրությամբ փոխառու միջոցների գծով պայմանագրային դրույթների խախտման համար պաշտոնապես ստացված զիջումների բացակայության պայմաններում, ղեկավարությունը դասակարգել է 2,954,571 հազար դրամ գումարով փոխառու միջոցները որպես ցպահանջ (2015 թ.՝ 3,566,139 հազար դրամ):

2016 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի չօգտագործված վարկային գծեր ստացված երկու ռեզիդենտ բանկերից 1,935,760 հազար դրամի չափով: Հաշվի առնելով նշվածը, Ընկերությունը չի ակնկալում իրացվելիության խնդիր 2017 թվականի ընթացքում:

Հետևյալ աղյուսակները մանրամասնում են Ընկերության մնացորդային պայմանագրային պարտավորությունները իր ոչ անանցյալ ֆինանսական պարտավորությունների համար, որոնք ունեն համաձայնեցված մարման ժամկետներ: Աղյուսակը կազմվել է հիմնվելով ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական հոսքերի վրա՝ ելնելով ամենավաղ ժամկետից, երբ Ընկերությունից կարող է պահանջվել վճարել: Հավանական չէ, որ աղյուսակներում ներառված հոսքերը կկայանան Էականորեն վաղ ժամկետում, կամ Էականորեն տարբերվող գումարներով: Աղյուսակը ներառում է և՛ տոկոսից, և մայր գումարից բխող դրամական հոսքերը: Քանի որ տոկոսագումարներից հոսքերը լողացող դրույթով են, չգեղջված գումարը հաշվարկվել է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսադրույթի կորերի հիման վրա:

	Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը	Հաշվեկշռային արժեք 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Ֆիքսված տոկոսադրույթով գործիքներ</i>							
Փոխառու միջոցներ	9.76%	1,109,090	1,382,826	5,049,777	11,752,697	19,294,390	17,664,456
Պարտավորություններ հետգնման պայմանագրերով	11.31%	1,196,795	-	-	-	1,196,795	1,196,795
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույթով ֆինանսական պարտավորություններ		2,305,885	1,382,826	5,049,777	11,752,697	20,491,185	18,861,251
<i>Փոփոխական տոկոսադրույթով գործիքներ</i>							
Փոխառու միջոցներ	7.39%	3,628,248	12,150	219,376	-	3,859,774	3,364,383
Ընդամենը փոփոխական տոկոսադրույթով ֆինանսական պարտավորություններ		3,628,248	12,150	219,376	-	3,859,774	3,364,383

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

							Հաշվեկշռային արժեք 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
		Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3 ամսից 1 տարի	1-5 տարի	Ընդամենը
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ</i>							
<i>Այլ ֆինանսական պարտավորություններ</i>			156,123	-	7,200	-	163,323
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ			156,123	-	7,200	-	163,323
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ			6,090,256	1,394,976	5,276,353	11,752,697	24,514,282
							22,388,957
<i>Ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ</i>							
<i>Փոխառու միջոցներ</i>		9.83%	131,723	3,234,728	6,958,865	7,693,731	18,019,047
<i>Ստորադաս փոխառություն</i>		14.14%	-	-	1,385,219	-	1,385,219
<i>Պարտավորություններ հետզևման պայմանագրերով</i>		11.9%	914,599	-	-	-	914,599
Ընդամենը ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ			1,046,322	3,234,728	8,344,084	7,693,731	20,318,865
							18,388,994
<i>Փոփոխական տոկոսադրույքով գործիքներ</i>							
<i>Փոխառու միջոցներ</i>		15.18%	4,987,293	15,286	2,014,552	913,173	7,930,304
Ընդամենը փոփոխական տոկոսադրույքով ֆինանսական պարտավորություններ			4,987,293	15,286	2,014,552	913,173	7,930,304
							6,462,655
<i>Ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ</i>							
<i>Այլ ֆինանսական պարտավորություններ</i>			138,170	-	-	-	138,170
Ընդամենը ոչ տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ			138,170	-	-	-	138,170
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ			6,171,785	3,250,014	10,358,636	8,606,904	28,387,339
							24,989,819

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերության շահույթները կամ կապիտալը կամ իր գործունեության նպատակներին հասնելու կարողությունը կվատթարանան շուկայական տոկոսադրույթներում և գներում փոփոխությունների կամ դրանց անկայունության պատճառով: Շուկայական ռիսկն ընդգրկում է տոկոսադրույթի և արժույթային ռիսկերը: Փոփոխություններ տեղի չեն ունեցել Ընկերության ռիսկերի գնահատման մոտեցումներում կամ ռիսկի աստիճանում, ինչպես նաև ռիսկերի կառավարման և չափման մեթոդներում:

Տոկոսադրույթի ռիսկ. Ընկերության դրամական հոսքերի տոկոսային վերլուծությունը իրենից ներկայացնում է ռիսկ, որ ֆինանսական ակտիվի ապագա դրամական հոսքերը կտատանվեն շուկայում առկա տոկոսադրույթների փոփոխությունների արդյունքում, և տոկոսադրույթի ռիսկի իրական արժեքն իրենից ներկայացնում է ռիսկ, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայում գերակշռող տոկոսադրույթներում տեղի ունեցող փոփոխությունների արդյունքում թե արժեքի, և թե դրամական միջոցների հոսքի ռիսկի գծով:

Տոկոսադրույթի զգայունություն. Ընկերությունը կառավարում է իրական արժեքով տոկոսադրույթի ռիսկը՝ պարբերաբար գնահատելով պոտենցիալ կորուստները, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից: Ընկերության ղեկավարությունը իրականացնում է Ընկերության ընթացիկ ֆինանսական գործունեության մոնիտորինգ, գնահատում է Ընկերության իրական արժեքով տոկոսադրույթի փոփոխությունների զգայունությունը և դրա ազդեցությունն Ընկերության շահութաբերության վրա:

Զգայունության վերլուծություններն իրականացվել են՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ոչ ածանցյալ գործիքների գծով տոկոսադրույթի ռիսկը:

Լողացող տոկոսադրույթով պարտավորությունների համար վերլուծությունները պատրաստվել են՝ ենթադրելով, որ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ չմարված պարտավորության գումարն այդպիսին է եղել ամբողջ տարվա ընթացքում: Հիմնական ղեկավար անձնակազմին տոկոսադրույթի ռիսկի փոփոխությունը ներկայացնելիս օգտագործվում է 200 բազիսային կետով աճ կամ նվազում, և ներկայացնում է ղեկավարության գնահատականը՝ տոկոսադրույթի գծով հնարավոր փոփոխությունների վերաբերյալ:

Եթե տոկոսադրույթները լինեին 200 բազիսային կետով ավելի բարձր կամ ցածր, և բոլոր մնացած փոփոխականները լինեին հաստատուն, ապա Ընկերության եկամուտը 2016թ. ավարտված տարվա համար կաճեր/կնվազեր 49,421 հազար ՀՀ դրամի չափով (2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 151,255 հազար ՀՀ դրամի չափով):

Արտարժույթի ռիսկ. Արտարժույթի ռիսկը սահմանվում է որպես ֆինանսական գործիքի արժեքի տատանումն արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Ընկերության ֆինանսական վիճակն և դրամական հոսքերը ենթակա են գերիշխող արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցության ռիսկին:

ԱՊԿԿ-ն վերահսկում է արտարժույթի ռիսկը՝ կառավարելով արժույթային բաց դիրքն ԱՄՆ դոլարի արժեքավազման և այլ մակրոտնտեսական ցուցանիշների գնահատումների հիման վրա, ինչն Ընկերությանը հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել վնասներն ազգային արժույթի նկատմամբ փոխարժեքի զգալի տատանումներից: Գանձապետն իրականացնում է Ընկերության արժույթային բաց դիրքի ամենօրյա մոնիտորինգ:

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Ընկերության վրա 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	Դրամ	ԱՄՆ դոլար	Այլ	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	924,640	300,714	42,349	1,267,703
Հաճախորդներին տրված վարկեր	10,171,926	15,843,542	-	26,015,468
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	1,268,240	-	1,268,240
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	11,096,566	17,412,496	42,349	28,551,411

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)

	<u>Դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար</u>	<u>Այլ</u>	<u>Ընդամենը</u>
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Փոխառու միջոցներ	3,848,397	17,180,442	-	21,028,839
Այլ ֆինանսական պարտավորություններ	89,594	54,029	19,700	163,323
Պարտավորություններ հետզնման պայմանագրերով	-	1,196,795	-	1,196,795
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	3,937,991	18,431,266	19,700	22,388,957
Հաշվեկշռային բաց դիրք	7,158,575	(1,018,770)	22,649	6,162,454
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Համախառն մարվող արժույթային սվոփեր	(1,606,946)	1,548,608	-	(58,338)
Բաց դիրք	5,551,629	529,838	22,649	6,104,116

Արտարժույթի փոխարժեքի գծով ռիսկի ազդեցությունը Ընկերության վրա 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	<u>Դրամ</u>	<u>ԱՄՆ դոլար</u>	<u>Այլ</u>	<u>Ընդամենը</u>
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	521,629	600,412	68,257	1,190,298
Հաճախորդներին տրված վարկեր	15,574,235	12,666,311	-	28,240,546
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	-	948,971	-	948,971
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	16,095,864	14,215,694	68,257	30,379,815

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ				
Փոխառու միջոցներ	7,446,242	15,259,784	-	22,706,026
Այլ ֆինանսական պարտավորություններ	74,727	63,443	-	138,170
Ստորադաս փոխառություններ	-	1,231,024	-	1,231,024
Պարտավորություններ հետզնման պայմանագրերով	914,599	-	-	914,599
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8,435,568	16,554,251	-	24,989,819
Հաշվեկշռային բաց դիրք	7,660,296	(2,338,557)	68,257	5,389,996
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Համախառն մարվող արժույթային սվոփեր	(2,990,347)	2,902,500	-	(87,847)
Բաց դիրք	4,669,949	563,943	68,257	5,302,149

Արտարժույթի ռիսկի զգայունություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Ընկերության զգայունությունը ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեքի 20% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 20%-ն իրենից ներկայացնում է այն զգայունակության տոկոսը, որն օգտագործվում է արտարժույթային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Չզայունության վերլուծությունը ներառում է միայն վճարման ենթակա արտարժույթով գնանշված դրամական միավորները և ճշգրտում է դրանց փոխարկումը ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 20% փոփոխության տեսանկյունից: Չզայունության վերլուծությունը ներառում է արտաքին վարկերը, որոնց դեպքում վարկի գնանշումը կատարված է վարկատուի կամ վարկառուի գործառնական արժույթից տարբեր արժույթով: Ստորև նշված դրական թիվը նշանակում է շահույթի կամ կապիտալի տարրի աճ այն դեպքերում, երբ ՀՀ դրամն արժևորվում է ԱՄՆ դոլարի նկատմամբ 20%-ի չափով:

	<u>2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>	<u>2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի</u>
Շահույթի կամ վնասի վրա ազդեցությունը	(105,968)	(112,789)
Կապիտալի վրա ազդեցությունը	(105,968)	(112,789)

Չզայունության վերլուծության սահմանափակումները. Վերը նշված աղյուսակում բերված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ

«ՖԻՆԵԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Յազար 33 դրամով, եթե այլ բան նշված չէ)**

փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոյացիա) կամ արտարկվեն (էքստրապոյացիա) այս արդյունքներից:

Չգայունության վերլուծությունում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ Ընկերության ակտիվները և պարտավորությունները ակտիվորեն կառավարվում են: Ի լրումն, Ընկերության ներկայիս ֆինանսական դիրքը կարող է տարբեր լինել այն ժամանակ, երբ որևէ իրական շուկայական շարժ տեղի ունենա: Օրինակ, Ընկերության ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարությունը նպատակ ունի կառավարելու շուկայական տատանումների ազդեցությանը ենթակա լինելը: Երբ ներդրումային շուկաներն անցնում են գանազան շեմային մակարդակներից, Ընկերության ղեկավարության արձագանքը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են ներդրումների վաճառքը, ներդրումային պորտֆելի բաշխվածության փոփոխությունը և այլ կանխարգելիչ միջոցառումներ: Յետևաբար, ենթադրությունների իրական փոփոխության ազդեցությունը կարող է որևէ ազդեցություն չունենալ պարտավորությունների վրա, մինչդեռ ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են շուկայական արժեքով: Այս հանգամանքներում, ակտիվների և պարտավորությունների տարբեր չափման հիմունքները կարող են հանգեցնել բաժնետիրական կապիտալի տատանումների:

Չգայունության վերլուծության այլ սահմանափակումները ներառում են հիպոթետիկ շուկայական շարժերի կիրառումը պոտենցիալ ռիսկերը ներկայացնելու նպատակով, որոնք ընդամենը ներկայացնում են Ընկերության տեսակետը մոտակա ժամանակների շուկայական հնարավոր փոփոխությունների վերաբերյալ, որոնք չեն կարող կանխատեսվել որևէ հավաստիությամբ, ինչպես և այն ենթադրությունը, որ բոլոր տոկոսադրույքները շարժվում են համանմանորեն:

Գնային ռիսկեր. Գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի շուկայական գների փոփոխության արդյունքում անկախ սրանից, թե փոփոխությունները հետևանք են առանձին արժեթղթին կամ դրա թողարկողին բնորոշ գործոնների, թե շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող գործոնների: Ընկերությունը ենթարկվում է իր ապրանքների կամ ծառայությունների շուկայական գների փոփոխության ռիսկին, որոնք ենթակա են թե՛ ընդհանուր, և թե՛ յուրահատուկ շուկայական տատանումների:

Ընկերությունը կառավարում է գնային ռիսկը այն պոտենցիալ կորուստների պարբերաբար գնահատման միջոցով, որոնք կարող են առաջանալ շուկայական պայմանների անբարենպաստ փոփոխություններից, ինչպես նաև սահմանելով և պահպանելով համապատասխան վնասների կանխարգելման սահմանաչափեր և միջակայքերի (մարժաներ) և գրավի պահանջներ: Ընկերության չտրամադրված վարկային պարտավորվածությունների գծով հնարավոր վնասների գումարը հավասար է այդ պարտավորվածությունների ընդհանուր գումարին: Այնուամենայնիվ, վնասի հավանական գումարը ավելի փոքր է քան այդ գումարը, քանի որ պարտավորվածությունների մեծ մասը պայմանական են՝ կախված մի շարք պայմաններից, որոնք սահմանված են վարկային պայմանագրերում:

Գործառնական ռիսկ. Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառնականությունները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Ընկերության հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգիչ հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Ընկերությունը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիտորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

«ՖԻՆԶԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)
(Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ)**

27. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2016 թ. դեկտեմբերի 30-ի թիվ N 1/970Ա որոշմամբ գրանցվել է «ՖԻՆԶԱ» ՈՒՎԿ ՓԲԸ անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման ծրագրային ազդագիրը: Ազդագրով գրանցված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեքը կազմում է 4,900,000 հազար դրամ (10,125,222 ԱՄՆ դոլար):

2017 թվականի փետրվարի 22-ին «ՖԻՆԶԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն թողարկել և ամբողջովին տեղաբաշխել է 4,000,000 ԱՄՆ դոլարի չափով պարտատոմսերի առաջին տրանշը: Պարտատոմսերը թողարկվել են երկու տարի ժամկետով և 7.5% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերը տեղաբաշխվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում:

2017 թվականի ապրիլի 27-ին «ՖԻՆԶԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն թողարկել և ամբողջովին տեղաբաշխել է 1,500,000 հազար դրամի չափով պարտատոմսերի երկրորդ տրանշը: Պարտատոմսերը թողարկվել են երկու տարի ժամկետով և 12.75% տարեկան եկամտաբերությամբ: Պարտատոմսերը տեղաբաշխվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում: